ՈՐՈՎԱՅՆԱԿՈՉ, ա. գ. Որովայնախօս,  
վհուկ:  
ՈՐՈՎԱՅՆԱՄՈՂ, տե՛ս ՈՐԿՈՐԱՄՈՂ:  
ՈՐՈՎԱՅՆԱՄՈՂՈՒԹԻՒՆ, տե՛ս ՈՐԿՈ-  
ՐԱՄՈՂՈՒԹԻՒՆ:  
ՈՐՈՎԱՅՆԱՊԱՇՏ, ա. Որովայնասէր:  
ՈՐՈՎԱՅՆԱՊԱՐԱՐ, ա. Որովայնամոլ,  
պորտաբոյծ, պորտապարար, շատակեր:  
ՈՐՈՎԱՅՆԱՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. Որո-  
վայնամոլութիւն:  
ՈՐՈՎԱՅՆԱՍԷՐ, տե՛ս ՈՐՈՎԱՅՆԱՊԱՇՏ:  
ՈՐՈՎԱՅՆԱՅԱՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. Փորա-  
ցաւութիւն:  
ՈՐՈՎԱՅՆԱՅՏԵՒ, շ. Ջի, քանզի, վասն զի, իբր  
զի:

ՈՐՈՏ, գ. 1. Որոտուճն, որոտիւն: 2. փխբ. Գոչիւն:  
ՈՐՈՏԱԶԱՅՆ, ա. 1. Որոտընդոստ: 2. գ. Որոտուճն, որոտ:  
ՈՐՈՏԸՆԴՈՍՏ, տե՛ս ՈՐՈՏԱԶԱՅՆ (1):  
ՈՐՈՏԻՒՆ, ՈՐՈՏՈՒՄՆ, տե՛ս ՈՐՈՏ:  
ՈՐՈՐ, գ. (կենդբ.) ձայ:  
ՈՐՈՐԱՆ, գ. Որորոց, որբան, որբոց:  
ՈՐ ՈՔ, տե՛ս ՈՐ:  
ՈՐԶԱՓ, գ. 1. Որբա՞ն, քանի՞: 2. չ. նխդ. Որպէս, իբբ, իբբև, իբբու:  
– Ո՞ՐԶԱՓ ԵՒՍ, Ո՞ՐԶԱՓ ԵՒՍ ԱՌԱՒԵԼ.  
Քանի՞օն, քանի՞ ևս:  
ՈՐԶԱՓՈՒԹԻՒՆ, տե՛ս ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ:  
ՈՐՊԱԿ, մ. չ. Որպէս, որգոն, զոր օրինակ:  
ՈՐՊԷՍ, նխդ. 1. Իբբև, նման, Հանգոյն: 2. մ. Զոր օրինակ, ըստ որում: 3. մ. Յորժամ, իբբև, եբբ, մինչ, այն ինչ: 4. չ. Որպակ, օրինակ իմն: 5. չ. Որպէս զի, զի: 6. գ. Որպիսութիւն: 7. ձ. Բա՛րբ, իբբև՛ զի, որպէ՛ս զի:  
ՈՐՊԷՍ ԶԻ, չ. 1. Զի, վասն զի: 2. (յունական ոճով) Մինչ զի, որպէս թէ, իբբ թէ: 3. ձ. Իբբև՛ զի, որպէ՛ս:  
ՈՐՊԷՍ ԹԷ, չ. 1. Իբբ այն թէ, իբբ եթէ, իբբ թէ: 2. Մինչ զի:  
ՈՐՊԷՏ, ա. Ուժպէտ:  
ՈՐՊԻՍԻ, գ. 1. Զինչպիսի՞: 2. Որգունակ:  
3. չ. Որպիսի ինչ, որգոն, որպէս, զոր օրինակ, օրինակ իմն:  
– ՈՐՊԻՍԻ ԻՆՁ, տե՛ս ՈՐՊԻՍԻ (3):  
ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ, գ. Որակուլիւն, որակ, յատկութիւն, Հանգամանք, տարազ, իսկուլիւն, յեղանակ, օրինակ:  
ՈՐՋ, գ. 1. Կաղաղ, մորի, բայոց, որջարան: 2. նման. Պատասպարան, թաքստոց:  
ՈՐՋԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ, Որջանալ:  
ՈՐՋԱՆԱԼ, չբ. Կաղաղանալ, որջամուտ լինել, որջել, զողել:  
ՈՐՋԱՐԱՆ, տե՛ս ՈՐՋ (1):  
ՈՐՋԵԼ, տե՛ս ՈՐՋԱՆԱԼ:  
ՈՐՋԻԼ, տե՛ս ՈՋԻԼ:

ՈՐՍ, գ. 1. Որսորդութիւն: 2. Կենդանի (որ կարելի է որսալ կամ որսած):  
ՈՐՍԱԿԱՆ, ա. 1. Որսող, որսորդ: 2. Որսորդական: 3. գ. Զկնորս:  
ՈՐՍԱՍԷՐ, ա. Որսատենչ:  
ՈՐՍԱՏԵՆՁ, տե՛ս ՈՐՍԱՍԷՐ:  
ՈՐՍՈՂ, ա. գ. 1. Որսորդ: 2. փխբ. Բանսարկու:  
ՈՐՍՈՐԳ, գ. Որսող, որսօն:  
– ՈՐՍՈՐԳ ԲԱՆԻՑ, Բանորսակ:  
ՈՐՍՈՐԳԱԿԱՆ, ա. Որսական:  
– ՈՐՍՈՐԳԱԿԱՆ, գ. Որսորդութիւն:  
ՈՐՍՈՐԳՈՒԹԻՒՆ, գ. Որս, որսորդականն:  
ՈՐՍՕՆ, գ. Որսորդ:  
ՈՐՐԱՆ, ՈՐՐՈՑ, տե՛ս ՈՐՈՐԱՆ:  
ՈՐՔԱՆ, գ. Ո՞Րջափ, քանի՞:  
ՈՐՔԱՆԱՔԱՐ, մ. Քանի՛պատիկ:  
ՈՐՔԱՆԻՅՍ ԱՆԳԱՄ, մ. Քանիցս անգամ:  
ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Քանակութիւն, քանակ, չափ: 2. Թուականն, թուականութիւն:  
ՈՐՔԻՆ կամ ՈՐՔԻՒՆ, գ. (բժշկ.) Մըջմընոց:  
ՈՐՔԻՆՈՏ, ա. Մարմառոտ:  
ՈՒ, չ. Եւ:  
ՈՒԹԱՄԱՍՆԵԱՅ, ա. Ութամասնի:  
ՈՒԹԱՄԱՍՆԻ, տե՛ս ՈՒԹԱՄԱՍՆԵԱՅ:  
ՈՒԹԵԱԿ, գ. Ութեքեակ:  
ՈՒԹԵՐԵԱԿ, տե՛ս ՈՒԹԵԱԿ:  
ՈՒԹԵՏԱՄՆ, տե՛ս ՈւթՈՒՏԱՄՆ:  
ՈՒԹԵՔԵԱՆ, թ. Ութեքիւն:  
ՈՒԹԵՔԻՆ, տե՛ս ՈՒԹԵՔԵԱՆ:  
ՈՒԹՈՒՏԱՄՆ, թ. Ութևտան:  
ՈՒԺԱԻՈՐ, տե՛ս ՈՒԺԵՂ:  
ՈՒԺԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. Բռնութիւն:  
ՈՒԺԳԻՆ, ա. 1. Զօրւտոր, պնդագոյն, սողկուն, ամեհի, խիստ: 2. մ. Ուժգնաբար, ուժգնապէս, ուժգինն, յոյժ, սաստիկ, կարի, բռնի, քաջ, մեծապէս:  
– ՈՒԺԳԻՆՍ, տե՛ս ՈՒԺԳԻՆ (2):

ՈՒԺԳՆԱԲԱՐ, տե՛ս ՈՒԺԳԻՆ (2):  
ՈՒԺԳՆԱԿ, ՈՒԺԳՆԱԿԻ, ա. մ. Ուժգին,  
ուժգնաբար:  
ՈՒԺԳՆԱՀՆՁԱԿ, ա. Ազդոյ, մեծածայն,  
բարձրածայն:  
ՈՒԺԳՆԱՆԱԼ, չբ. Զորանալ, սաստկա-  
նալ, ուժեղանալ:  
ՈՒԺԳՆԱՊԷՍ, տե՛ս ՈՒԺԳԻՆ (2):  
ՈՒԺԳՆԱՊԻՐԿ, ա. Կարկամ, պինդ,  
կարծր:  
ՈՒԺԳՆԱՍԻՐՏ, ա. Փաջասիրտ, անվեհեր,  
արի:  
ՈՒԺԳՆԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Զորացուցա-  
նել, սաստկացուցանել, ամրացուցանել,  
ձգտել:  
ՈՒԺԳՆՈՒԹԻՒՆ, գ. Սաստկութիւն, ոյժ,  
զօրութիւն, ուժեղութիւն:  
ՈՒԺԵՂ, ա. Ուժաւոր, զօրաւոր, հզօր, զօ-  
րեղ, քաջ, կորովի, կարող, տոկուն, ան-  
պարտելի:  
ՈՒԺԵՂԱԳՈՅՆ, ա. Զօրագոյն, պնդա-  
գոյն:  
ՈՒԺԵՂԱԿ, ա. 1. Զօրաւոր, քաջ: 2. Ուժ-  
գին:  
ՈՒԺԵՂԱԿԱԲԱՐ, մ. Արիաբար, քաջա-  
պէս:  
ՈՒԺԵՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՈՒԺԵ-  
ՂՈՒԹԻՒՆ:  
ՈՒԺԵՂԱՆԱԼ, տե՛ս ԶՕՐԱՆԱԼ:  
ՈՒԺԵՂԱՊԷՍ, մ. Ուժգնապէս, սաստկա-  
պէս:  
ՈՒԺԵՂԱՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԶՕՐԱՑՈՒ-  
ՑԱՆԵԼ:  
ՈՒԺԵՂՈՒԹԻՒՆ, գ. Զօրեղութիւն, զօ-  
րաւորութիւն, կորովութիւն, ոյժ, զօրու-  
թիւն, ուժգնութիւն:  
ՈՒԼ<sup>1</sup>, գ. Ուլիկ, յուլիկ, ալոջ (էգ), ամիկ,  
բուժ:  
ՈՒԼ<sup>2</sup>, տե՛ս ՈՒԼՆ (2):  
ՈՒԼԻԿ կամ ՅՈՒԼԻԿ, տե՛ս ՈՒԼ<sup>1</sup>:  
ՈՒԼՆ, գ. 1. Վիզ, փող, պարանոց: 2. Ուլ  
(խաղալու վէգ):

ՈՒԽՏ, գ. 1. Խոստումն, պայման, դաշն:  
2. Աղօթք: 3. Վանք:  
ՈՒԽՏԱԴԻՐ, ա. 1. Դաշնաւոր, դաշնա-  
գիր, ուխտակից: 2. Աղօթական: 3. (կրօն)  
Նուիրական:  
ՈՒԽՏԱԴՐԵԼ, նբ. չբ. Դաշնաւորել, ուխ-  
տել:  
ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. Դաշնաւորու-  
թիւն, ուխտ, խոստումն:  
ՈՒԽՏԱԴՐՈՒԺ, ա. Ուխտանենդ, ուխտա-  
զանց:  
ՈՒԽՏԱԶԱՆՅ, ա. Ուխտադրութ, ուխտա-  
կորոյս:  
ՈՒԽՏԱԶԱՆՅՈՒԹԻՒՆ, գ. Պատուիրա-  
նազանցութիւն, ուխտանենդութիւն:  
ՈՒԽՏԱԿԱԼ, ա. Ուխտապահ, ուխտըն-  
կալ:  
ՈՒԽՏԱԿԱՆ, ա. (կրօն.) Կղերական, վա-  
նական:  
ՈՒԽՏԱԿԱՏԱՐ, ա. Ուխտապահ:  
ՈՒԽՏԱԿԻՅ, ա. Դաշնաւոր, միաբան:  
ՈՒԽՏԱԿՈՐՈՅՍ, ա. Ուխտազանց, ուխ-  
տադրութ:  
ՈՒԽՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Դաշնաւորու-  
թիւն, միաբանութիւն:  
ՈՒԽՏԱՆԵՆԳ, ա. Ուխտադրութ, ուխտա-  
զանց, ուխտակորոյս, ուրացող:  
ՈՒԽՏԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ, գ. Ուխտազան-  
ցութիւն, ուրացութիւն:  
ՈՒԽՏԱՊԱՀ, ա. Ուխտակալ, ուխտակա-  
տար:  
ՈՒԽՏԱՊԱՀՈՒԹԻՒՆ, գ. Հաւատարմու-  
թիւն:  
ՈՒԽՏԱՍԷՐ, ա. Ուխտապահ:  
ՈՒԽՏԱՐԱՆ, գ. (կրօն.) Տապանակ ուխտի:  
ՈՒԽՏԱՐԱՐ, ա. Կամակատար, հաճոյա-  
կան:  
ՈՒԽՏԱՌՈՐ, ա. գ. 1. (կրօն.) Ուխտադիր.  
նազարացի: 2. Ժառանգաւոր, վիճակա-  
ւոր, եկեղեցական, կղերիկոս: 3. Վանա-  
կան, կրօնաւոր, միանձն: 4. Միայնուհի,  
հաւատաւոր:

ՈՒՆՏԱՒՈՐԵԼ (իմ), չբ. Կրօնաւորել:  
ՈՒՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Ուխտադրու-  
թիւն, սրբութիւն:  
ՈՒՆՏԵԼ, նբ. Ուխտադրել, խոստանալ:  
ՈՒՆՏԸՆԿԱԼ, տե՛ս ՈՒՆՏԱԿԱԼ:  
ՈՒԾԱՆԱԼ, չբ. Հովանալ, սառչել, ցրտա-  
նալ, պաղել, օտարանալ:  
ՈՒԾԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Յրտացուցանել,  
հովացուցանել, օտարացուցանել:  
ՈՒՂ, գ. Ուղի:  
ՈՒՂԱՐԿԱՒՈՐ, տե՛ս ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐ:  
ՈՒՂԱՐԿԵԼ, տե՛ս ՅՈՒՂԱՐԿԵԼ:  
ՈՒՂԵԳՆԱՅ, կամ ՈՒՂԵԳՆԱՅ, ա.  
Ուղեոր, ճանապարհորդ:  
ՈՒՂԵԳՆԱՅՈՒԹԻՒՆ, գ. Ուղեորութիւն,  
ճանապարհորդութիւն:  
ՈՒՂԵԴԱՐՁ, գ. Վերադարձ:  
ՈՒՂԵԿԻՅ, ա. 1. Ճանապարհակից, ճա-  
նապարհորդակից: 2. Զուգընթաց, համըն-  
թաց:  
ՈՒՂԵԿՅԵԼ, չբ. Ճանապարհակցել:  
ՈՒՂԵԿՅՈՒԹԻՒՆ, գ. 1. Ճանապարհա-  
կըցութիւն: 2. Զայնակցութիւն:  
ՈՒՂԵԴ, գ. 1. Խելք, խելապատակ: 2.  
Փխբ. Միտք, բանականութիւն: 3. նման.  
Պարարտութիւն:  
ՈՒՂԵՐՁԵԼ, նբ. Ըդերձել, ընծայաբեր լի-  
նել, հաճել:  
ՈՒՂԵՒՈՐ, ա. գ. Ուղեղնաց, ճանապար-  
հորդ, անցաւոր, հետևող:  
ՈՒՂԵՒՈՐԵԼ<sup>1</sup>, նբ. Առաջնորդել:  
ՈՒՂԵՒՈՐԵԼ<sup>2</sup> (իմ), չբ. Ճանապարհորդել,  
դիմել, երթալ, գնալ:  
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Ուղեղնացու-  
թիւն, ճանապարհորդութիւն, ընթացք,  
երթ: 2. փխբ. Փոխումն (մեռնելը):  
ՈՒՂԵՇ, գ. Ճիւղ, ոստ, բարունակ, շա-  
ռաւիղ, ստեղն, ընձիւղ, ուռ:  
ՈՒՂԻ, գ. Ճանապարհ, ուռ, անցք:  
ՈՒՂԻՂ, ա. 1. Անխոտոր, միօրինակ,  
հարթ, դիւրին: 2. փխբ. Արդար, իրաւա-  
ցի, ճշմարիտ, բարի: 3. մ. Ուղղապէս:

- ՈՒՂԻՂ ԱՆՆԵԼ, տե՛ս ՈՒՂՂԵԼ:  
ՈՒՂԽ, մանաւանդ՝ ՈՒՂԽՔ, գ. 1. Հեղեղ,  
ոլոլ: 2. Հեղեղատ, վտակ:  
ՈՒՂԽԱՊԱՐԱՐ, ա. Զրարբի:  
ՈՒՂԽԱՋՈՒՐ, ա. Յորդառատ, յորդա-  
ջուր:  
ՈՒՂԽԵԼ, չբ. Զեղանել, յորդել:  
ՈՒՂԿԵԱՆ, ա. Թղաչափ, թղեան:  
ՈՒՂՂԱԲԱՐ, տե՛ս ՈՒՂՂԱԿԻ:  
ՈՒՂՂԱԲԵՐՁ, ա. Ուղղորդ, կանգուն,  
բարձրապարանոց:  
ՈՒՂՂԱԳԻՐ, ա. Ճշմարտաճառ:  
ՈՒՂՂԱԳՆԱՅ, ա. 1. Ուղղազնացիկ,  
ուղղորդազնաց, ուղղազնացական: 2.  
Ուղղազնացեալ:  
ՈՒՂՂԱԳՆԱՅԱԿԱՆ, տե՛ս ՈՒՂՂԱ-  
ԳՆԱՅ (1):  
ՈՒՂՂԱԳՆԱՅԱՍԷԼ, տե՛ս ՈՒՂՂԱԳՆԱՅ  
(2):  
ՈՒՂՂԱԳՆԱՅԻԿ, տե՛ս ՈՒՂՂԱԳՆԱՅ  
(1):  
ՈՒՂՂԱԳՈՐԾ, ա. Արդար, բարեգործ,  
առաքինի, իրաւարար:  
ՈՒՂՂԱԴԱՏ, ա. Արդարադատ:  
ՈՒՂՂԱԴԱՒԱՆ, ա. Ուղղահաւատ, ուղ-  
ղափառ:  
ՈՒՂՂԱԼԻՅ, ա. Պարարտ, գէթ, պարա-  
րակ:  
ՈՒՂՂԱԽՈՂ, ՈՒՂՂԱԽՈՐՂ, տե՛ս ՈՒՂ-  
ՂԱՀԱՒԱՏ:  
ՈՒՂՂԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. Ուղղաձայնու-  
թիւն:  
ՈՒՂՂԱԾԵԼ, նբ. Առաջնորդել:  
ՈՒՂՂԱԿԱՆ, ա. 1. Ուղիղ: 2. (քեր.)  
Անուանական (հոյով):  
ՈՒՂՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՈՒՂՂՈՒ-  
ԹԻՒՆ և ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ:  
ՈՒՂՂԱԿԵՐՏԵԼ, նբ. Ուղղել, կանգնել:  
ՈՒՂՂԱԿԻ, մ. 1. Ուղղաբար, ուղղապէս,  
դէպուղիղ: 2. Յիրաւի:  
ՈՒՂՂԱԿՏՈՒՐ, ա. Անխոտոր, անվրէպ:  
ՈՒՂՂԱԿՅԵԼ, նբ. Յարել, միաւորել:

ՈՒՂՂԱՀԱՆՔԱՆՍ, ա. Ուղղադաւան, ուղղափառ, ուղղախոս, ողջամիտ:  
ՈՒՂՂԱՀԱՆՔԱՆՍՈՒԹԻՒՆ, գ. Ուղղափառութիւն, ողջմտութիւն:  
ՈՒՂՂԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Ուղղախօսութիւն:  
ՈՒՂՂԱԶԵԻՆ, նբ. Ուղղից:  
ՈՒՂՂԱԶԻԳ, ա. Ուղղատարած:  
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Ողջմտութիւն, անկեղծութիւն, հաւատարմութիւն:  
ՈՒՂՂԱՇԱԻՂ, ա. Ուղղընթաց:  
ՈՒՂՂԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. Բարեպաշտութիւն:  
ՈՒՂՂԱՊԱՏՈՒՄ, տե՛ս ձՇՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ:  
ՈՒՂՂԱՊՏԻՍ, տե՛ս ՈՒՂԻՂ (3) և ՈՒՂՂԱԿԻ (1):  
ՈՒՂՂԱՍԻՐՏ, ա. Ողջամիտ:  
ՈՒՂՂԱՍԱՐԱԾ, տե՛ս ՈՒՂՂԱԶԻԳ:  
ՈՒՂՂԱՆՈՐԵԼ, նբ. Ուղղից, կարգից, առաջնորդից:  
ՈՒՂՂԱՆՈՐԻԶ, ա. գ. 1. Ղեկավար: 2. Ղեկ:  
ՈՒՂՂԱՓԱՌ, ա. (կրօն.) Ուղղադաւան, ուղղահաւատ, ուղղափառհաւատ, որթոգոթա:  
ՈՒՂՂԱՓԱՌՀԱՒԱՏ, տե՛ս ՈՒՂՂԱՓԱՌ:  
ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ, գ. Ուղղահաւատութիւն, ողջմտութիւն:  
ՈՒՂՂԵԱԿ, տե՛ս ՂԵԿ:  
ՈՒՂՂԵԼ, նբ. Ուղիղ աւանի, հարթից, յարգարից, կանգնից, յաջողից, վարից, ղեկավարից, կառավարից, առաջնորդից, հոփուցից, բարեկարգից:  
ՈՒՂՂԸՆԹԱՅ, ա. Ուղղաշաւիղ, շնորհաշաւիղ:  
ՈՒՂՂԻԶ, ա. գ. 1. Առաջնորդ, կառավար, ղեկավար, վարիչ: 2. Ուղղիցի, ղեկ, քեփի:  
ՈՒՂՂՈՐԴ, ա. 1. Ուղիղ: 2. Ուղղաբերձ, կանգուն: 3. մ. Ուղղապէս, ուղղորդա-

բար, ուղղորդապէս, ուղղութեամբ:  
ՈՒՂՂՈՐԴԱՐԱՐ, տե՛ս ՈՒՂՂՈՐԴ (3):  
ՈՒՂՂՈՐԴԱԳՆԱՅ, տե՛ս ՈՒՂՂԱԳՆԱՅ (1):  
ՈՒՂՂՈՐԴԱՊՏԻՍ, մ. Ուղիղ, ուղղորդ:  
ՈՒՂՂՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. Ուղղութիւն:  
ՈՒՂՂՈՒԹԻՒՆ, գ. Ուղղորդութիւն (ուղիղ լինելը):  
ՈՒՂՈՒԿ, տե՛ս ՈՒՂԿԵԱՆ:  
ՈՒՂՈՒԴԻԼ, չբ. Լողալ, լուզիլ, դուզիլ:  
ՈՒՂՏ, գ. (կենդբ.) Շառաւն:  
ՈՒՂՏԻՆՁ, տե՛ս ԸՆՁՈՒՂՏ:  
ՈՒՂՓԱՃԵՄ, ա. Երկնաճեմ, լուսաճեմ:  
ՈՒՂՓԵԱՆ, ա. Արփիական, երկնային:  
ՈՒՄՊ, գ. Արբուն:  
ՈՒՄՊԷՏ, ՈՒՄ ԵՒ ՊԷՏ, ա. մ. Անպէտ, պիտակ, անխտիր, վայրապար:  
ՈՒՆԱԿ, տե՛ս ՈՒՆԵԼԻ (1):  
ՈՒՆԱԿԱՆԱԼ, չբ. 1. Բնաւորից: 2. Զետեղից: 3. Խանձից, կրթից:  
ՈՒՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ունակութիւն:  
ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Ունելութիւն, կալուամբ, ընդունակութիւն:  
ՈՒՆԱՅՆ, ա. 1. Թափուր, դատարի, դատարկաճեռն, պարապորդ, նանիր, սին, սնոտի, ընդունայն, անմասն, մերկ, սոսկ, լոկ: 2. գ. Դատարկութիւն:  
- ՈՒՆԱՅՆ ԵՒ ԹԱՓՈՒՐՔ ՄՆԱԼ, տե՛ս ՈՒՆԱՅՆԱՆԱԼ:  
ՈՒՆԱՅՆԱՐԱՆ, ա. Դատարկաբան:  
ՈՒՆԱՅՆԱՐԱՆԵԼ, չբ. Դատարկաբանից:  
ՈՒՆԱՅՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ, գ. Դատարկաբանութիւն, ունայնաձայնութիւն, զրախօսութիւն, շատախօսութիւն:  
ՈՒՆԱՅՆԱՐԱՐ, մ. Ունայնապէս, ընդունայն, ի նանիր, ի գուր:  
ՈՒՆԱՅՆԱՐՈՅՍ, ա. Ընդվայրաբոյս:  
ՈՒՆԱՅՆԱՆՈՐՀ, ա. Զրախորհուրդ:  
ՈՒՆԱՅՆԱՀԱՒԱՏ, ա. Թերահաւատ:  
ՈՒՆԱՅՆԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Ունայնաբանութիւն: 2. (կրօն.) Նորաձայնութիւն:

ՈՒՆԱՅՆԱԶԵՌՆԵՆ, Կ. Մ. Ընդունայնա-  
ձեռն, դատարկաձեռն, ձեռնունայն:  
ՈՒՆԱՅՆԱՄԻՏ, Կ. Ունայնախորհ:  
ՈՒՆԱՅՆԱՆԱԼ, չբ. Ունայն և թափուրք  
մնայլ, զրկել, անզաւակել, ի դերե ելանել:  
ՈՒՆԱՅՆԱՊԱՐԾ, Կ. Մնապարծ:  
ՈՒՆԱՅՆԱՊԵՍ, Կ. Մ. ՈՒՆԱՅՆԱԲԱՐ:  
ՈՒՆԱՅՆԱԶԱՆ ԼԻՆԵԼ, Կ. Մ. ՈՒՆԱՅ-  
ՆԱՎԱՍԱԿ ԼԻՆԵԼ:  
ՈՒՆԱՅՆԱՎԱՍԱԿ ԼԻՆԵԼ. Ունայնա-  
ջան լինել:  
ՈՒՆԱՅՆԱՎԱՐ, Կ. Դատարկ, աւելորդ,  
սնոտի:  
ՈՒՆԱՅՆԱՅՈՒՅԱՆԵԼ, Կ. Նուաստա-  
ցուցանել:  
ՈՒՆԱՅՆԱՓԱՌ, Կ. Մնափառ, զրափառ:  
ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ, Կ. Նանրութիւն, ըն-  
դունայնութիւն:  
ՈՒՆԳ, Կ. Մեծած, մղող:  
ՈՒՆԴ, Կ. Հունդ, սերմն:  
ՈՒՆԴԱԿԵՐ, Կ. Մ. ԴԱԿԵՐ:  
ՈՒՆԵԼ, չբ. 1. Կալուլ, ըմբռնել, բուռն  
հարկանել, պինդ ունել, պահել, արգե-  
լուլ: 2. Կրել, տանել: 3. Առնուլ, տիրել:  
4. Կարել, մարթել:  
- ՈՒՆԵԼ ԱՌ Կամ ԻԲՐԵԻ. Համարել,  
առգնել:  
ՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ, Կ. Տէրութիւն, տիրո-  
ղութիւն, տիրութիւն:  
ՈՒՆԻՈՎՆ, Կ. (Հնք.) Եղնգաբար:  
ՈՒՆԿԻ, Կ. Նուկի, նուկիէ:  
ՈՒՆԿՆ, Կ. 1. Ականջ, լսարան, լսելիք: 2.  
յոգն. Ունկունք, բռնատեղ:  
- ՈՒՆԿՆ ԴՆԵԼ. Ունկնդիր լինել, ուն-  
կնդրել, ականջել, լսել, հնազանդել, ան-  
սալ:  
ՈՒՆԿՆԱԴՐՈՒԹԻՒՆ, Կ. Մ. ՈՒՆԿՆԴՐ-  
ՈՒԹԻՒՆ:  
ՈՒՆԿՆԱԼՈՒՐ, Կ. Մ. ԱԿԱՆՋԱԼՈՒՐ:  
ՈՒՆԿՆԱՄՈՒՏ, Կ. Մ. ԱԿԱՆՋԱՄՈՒՏ:  
ՈՒՆԿՆԴԻՐ, Կ. Մ. 1. Հնազանդ: 2. Աշա-  
կերտ:

- ՈՒՆԿՆԴԻՐ ԼԻՆԵԼ, Կ. Մ. ՈՒՆԿՆ  
ԴՆԵԼ:  
ՈՒՆԿՆԴՐԵԼ, Կ. Մ. ՈՒՆԿՆ ԴՆԵԼ:  
ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ, Կ. Մ. Լսողութիւն,  
հնազանդութիւն:  
ՈՒՆՈՂՈՒԹԻՒՆ, Կ. 1. Ունակութիւն, ու-  
նումն, կալումն: 2. Իշխանութիւն:  
ՈՒՆՈՒՄՆ, Կ. Մ. ՈՒՆՈՂՈՒԹԻՒՆ (1):  
ՈՒՆՁ, մանաւանդ ՈՒՆՁԲ, Կ. 1. Քիթ: 2.  
Պինջ, ունդն, քթափողք: 3. Պերեշտք:  
- ՈՒՆՁՍ ԱՌՆԵԼ ՈՒՆԵԼ՝ ԸՆԿԵՆՈՒԼ,  
Կամ ՅԸՆՁՍ ՔԵՐԵԼ, ՅԸՆՁՍՅԲ ԲԱ-  
ՆԱԼ. Ծաղր այսպն առնել, եպերել, ար-  
համարհել, քամահել, պոստել:  
ՈՒՆՁԱՏ, Կ. Պնչատ:  
ՈՒՆՋ, Կ. 1. Տակ, խորք, յատակ, գետին:  
2. Խոր: 3. Արմատ:  
ՈՒՇ. Կ. 1. Յիշողութիւն: 2. Ուշադրու-  
թիւն, մտադրութիւն, դիտողութիւն,  
զգուշութիւն: 3. Ուշողութիւն, միտք,  
խելք: 4. Յիշատակ, յիշողութիւն:  
- ՈՒՇ ԱՌՆԵԼ՝ ԱՌՆՈՒԼ՝ ԴՆԵԼ՝ ՈՒՆԵԼ  
(Իմ), 1. Միտ դնել, փոյթ ունել, գուն գոր-  
ծել, նկատել: 2. Նկրտել, դէտակն ունել,  
դիտել, զգոյշ լինել, պատկառ կալ:  
- ՅՈՒՇ ԱՌՆԵԼ՝ ԱՐԿԱՆԵԼ. Յիշեցուցա-  
նել, ազդ առնել, յիշել:  
- ՅՈՒՇ ԲԵՐԵԼ. Յիշել, խորհել:  
- ՅՈՒՇ ԳԱԼ, Կ. Մ. ՈՒՇԱԲԵՐԵԼ<sup>2</sup> (Իմ):  
- ՅՈՒՇ ԼԻՆԵԼ ՈՒՄԵՔ. Յիշել, յիշատա-  
կել:  
ՈՒՇԱԲԵՐԵԼ<sup>1</sup>, Կ. Մ. Յուշ բերել, յիշել, որո-  
ճել, ի միտ առնուլ:  
ՈՒՇԱԲԵՐԵԼ<sup>2</sup> (Իմ), չբ. Գալ ի միտս՝  
յիշքն, ուշաբեր լինել, յուշ գալ, զան-  
ձամբ լինել, զգաստանալ, խելաբերել,  
հնազանդութիւն:  
ՈՒՇԱԲԵՐ ԼԻՆԵԼ, Կ. Մ. ՈՒՇԱԲԵՐԵԼ<sup>2</sup>  
(2):  
ՈՒՇԱԴՐԵԼ, Կ. Մ. չբ. 1. Ուշ դնել, ուշ ու-  
նել, միտ դնել: 2. Դէտակն ունել:  
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, Կ. Մ. Մտադրութիւն,

արթնութիւն, խելամտութիւն, զգուշու-  
թիւն, զխտողութիւն:  
ՌԻՇԱԿԱԼ, ա. Ուշակալու:  
ՌԻՇԱԿԱԼՈՒ, տե՛ս ՌԻՇԱԿԱԼ:  
ՌԻՇԱՏՈՒ, ա. Փոյթ, ջանասէր:  
ՌԻՇԱՐԱՐ, ա. Մտադիր, ուշեղ:  
ՌԻՇԵՂ, ա. Ուշիմ:  
ՌԻՇԵՂԱՊԷՍ, մ. Ուշադրութեամբ:  
ՌԻՇԵՂՈՒԹԻՒՆ, գ. Ուշ, խելք, իմաս-  
տութիւն:  
ՌԻՇԻՄ, ա. Ուշեղ, մտացի, խելացի, սրա-  
միտ, իմաստուն, խոհական, զգօն:  
ՌԻՇՄԱԳՈՅՆ, իմաստնազոյն, ուսում-  
նասէր, խոհական, Հանճարեղ:  
ՌԻՇՈԳԻ, ա. Բարեկարգ, բարեձև:  
ՌԻՌՒ, գ. 1. Բարունակ (խաղողի որթի  
մատը): 2. Շառաւիղ, ուղէջ, ճիւղ, ոստ: 3.  
տե՛ս ՌԻՌԻ:  
ՌԻՌՁ, գ. Նստոյ տեղի:  
ՌԻՌԵՆԻ, տե՛ս ՌԻՌԻ:  
ՌԻՌԵՑ, ա. Ուռոյց:  
ՌԻՌԹԱՆԱԼ, չբ. Ուռճանալ:  
ՌԻՌԹԵԼ, տե՛ս ՅՈՒՌԹԵԼ:  
ՌԻՌԻ, գ. (բար.) Ուռնի, ուռ:  
ՌԻՌԿԱՆ, գ. Ցանց, արճող, արճոյլ:  
ՌԻՌԿԱՆԱՐԿ, ՌԻՌԿԱՆԱԻՐ, ա. գ.  
Ցանցորդ, ձկնորս:  
ՌԻՌԿԱՆԵԼ, նբ. Որսալ, ցանցել,  
վարմարիկ, ժողովել:  
ՌԻՌՃԱԶԱՐԴ, ա. Առատ, լիուլի, յորդ:  
ՌԻՌՃԱԼԻ, ՌԻՌՃԱԼԻՐ: ՌԻՌՃԱԼՐՈՅԵ-  
ԱԼ, ա. 1. տե՛ս ՌԻՌՃԱԶԱՐԴ: 2. Զուար-  
ճալի:  
ՌԻՌՃԱՆԱԼ, չբ. Ուռթանալ, լիանալ, ճո-  
խանալ, պերճանալ, զօրանալ, զուարճա-  
նալ:  
ՌԻՌԵ, գ. Կռան, մուրճ:  
ՌԻՌԵՈՒԼ կամ ՌԻՌՉԵԼ (իմ), չբ. 1. Այտ-  
նուլ, խանչանալ: 2. փխբ. Փքանալ, փք-  
քալ, ամբարտաւանել, հպարտանալ:  
ՌԻՌՈՅՑ, ա. գ. 1. Ուռեց: 2. Այտոյց:  
ՌԻՌՈՒԹ, տե՛ս ՅՈՒՌՈՒԹ:

ՌԻՌՈՒՑԱՆԵԼ, պբ. Ըմփորտել:  
ՌԻՌՈՒՑՈՒՄՆ, գ. 1. Այտումն, այտու-  
ցումն: 2. փխբ. Փքումն, փքանք, խան-  
չումն:  
ՌԻՌՉԵԼ (իմ), տե՛ս ՌԻՌԵՈՒԼ:  
ՌԻՍ, գ. 1. Նուս: 2. Օձիք: 3. փխբ. Մէջք,  
թիկունք:  
ՌԻՍԱԾ, ա. Քաջուսումն, ճարտար:  
ՌԻՍԱՆԵԼ (իմ), հբ. 1. Վարդապետել,  
վարժել, սովորել, կրթել: 2. Իմանալ, տե-  
ղեկանալ:  
ՌԻՍԱՆՈՅ, գ. (եկեղց.) Վակաս:  
ՌԻՍՈՂ, ա. գ. Ուսումնական, մաթէմա-  
տիկոս:  
ՌԻՍՈՂՈՒԹԻՒՆ, տե՛ս ՌԻՍՈՒՄՆ:  
ՌԻՍՈՒՄՆ, գ. 1. Ուսողութիւն, տեղեկու-  
թիւն, հմտութիւն, գիտութիւն, արուեստ:  
2. Կրթութիւն, սովորութիւն, վարդապե-  
տութիւն: 3. Կրօն, դէն, աղանդ: 4. Ու-  
սուցումն:  
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ, տե՛ս ՌԻՍՈՂ:  
– ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆԵՆ, տե՛ս ՌԻՍՈՒՄՆԱ-  
ԿԱՆՈՒԹԻՒՆ:  
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ուսումնա-  
կանն, ուսումնուածք (մաթէմատիկա):  
ՌԻՍՈՒՄՆԱԿԻՑ, ա. գ. Դաւանակից,  
Հաւատակից:  
ՌԻՍՈՒՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Հաւատակ-  
ցութիւն:  
ՌԻՍՈՒՄՆԱՍՆՐ, ա. գ. 1. Գիտնաւոր,  
բանասէր, հմտասէր: 2. Փոյթ, երկասէր,  
աշխատասէր:  
ՌԻՍՈՒՄՆՈՒԱԾՔ, տե՛ս ՌԻՍՈՒՄՆԱ-  
ԿԱՆՈՒԹԻՒՆ:  
ՌԻՍՈՒՑԱՆԵԼ, պբ. Վարդապետել, վար-  
ժել, կրթել:  
– ՌԻՍՈՒՑԱՆԵԼԻ, ՌԻՍՈՒՑԱՆՈՂ, տե՛ս  
ՌԻՍՈՒՑՈՂ:  
ՌԻՍՈՒՑԻՉ, ա. գ. 1. Ուսուցանող, ուսու-  
ցող, վարժապետ, վարդապետ, մանկա-  
վարժ, դաստիարակ: 2. Առաջնորդ:  
ՌԻՍՈՒՑՈՂ, ա. գ. Ուսուցանող, ուսու-

ցիչ, վարդապետ, բաբուն:  
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ, գ. Ուսումն, խրատ:  
ՈՒՍՈՒՑԶԱՊԵՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ՎԱՐԳԱ-  
ՊԵՏՈՒԹԻՒՆ:  
ՈՒՍՏ, գ. Ուստի:  
ՈՒՍՏԵՄՆ, մ. Ուստեք, անտի:  
ՈՒՍՏԵՔ, տե՛ս ՈՒՍՏԵՄՆ:  
- ՈՒՍՏԵՔ ՈՒՍՏԵՔ, մ. Աստի և անտի:  
- ԱՄԵՆԱՅՆ ՈՒՍՏԵՔ, մ. Յամենուստ:  
- ԱՅԼ ՈՒՍՏԵՔ, ԱՅԼՈՒՍ ՈՒՍՏԵՔ,  
տե՛ս ԱՅԼՈՒՍ:  
ՈՒՍՏԻ, գ. 1. Ուստ: 2. Ղ. Վասն որոյ,  
վասն այսորիկ, ապա ուրեմն:  
ՈՒՍՏՐ, գ. Որդի, տղայ:  
ՈՒՏԵԼ, նբ. 1. Ճաշակել, ճարակել: 2.  
փխբ. Ծախել, վատնել, հալել, մաշել: 3.  
փխբ. Տանջել, չարչարել:  
ՈՒՏԵԼԻ, ա. գ. 1. Կերակուր, ճարակ: 2.  
Ճաշակելի:  
ՈՒՏԵՍ, գ. Պարէն, նպար, ոռճիկ:  
ՈՒՏԻՃ, գ. 1. Երբ, ցեց, մեց: 2. Քաղցկեղ:  
ՈՒՏԻՉ, ա. Կերիչ:  
Ո՞ՒՐ, գ. 1. Յո՞, յո՞վ: 2. մ. Ղ. Երբ, յոր-  
ժամ, մինչ:  
ՈՒՐԱԳ, գ. Դակու:  
ՈՒՐԱԽ, ա. Զուարթ, խրախ:  
- ՈՒՐԱԽ ԱՌՆԵԼ, տե՛ս ՈՒՐԱԽԱՅՈՒ-  
ՑԱՆԵԼ:  
- ՈՒՐԱԽ ԼԻՆԵԼ, իրախ լինել, ուրախա-  
նալ, խնդալ, բերկրել, ցնծալ, զուարճա-  
նալ:  
ՈՒՐԱԽԱԲԵՐ, ա. Բերկրաբեր:  
ՈՒՐԱԽԱԼԻՐ, ՈՒՐԱԽԱԼԻՑ, ա. Բերկրա-  
լից, խնդալից, ուրախական, ուրախա-  
րար:  
ՈՒՐԱԽԱԿԱՆ, ա. Ուրախալի, խնդալի:  
ՈՒՐԱԽԱԿԻՑ ԼԻՆԵԼ. 1. Խնդալից լինել:  
2. Խրախճանակից լինել:  
ՈՒՐԱԽԱՄԻՏ, ա. 1. Զուարթ: 2. Ուրա-  
խական:  
ՈՒՐԱԽԱՆԱԼ, տե՛ս ՈՒՐԱԽ ԼԻՆԵԼ:  
ՈՒՐԱԽԱՐԱՐ, ա. Ուրախացուցիչ, զու-

արթացուցիչ, զուարթարար:  
ՈՒՐԱԽԱՅՈՒՑԱՆԵԼ, պբ. Ուրախ առնել,  
զուարթացուցանել, զուարճացուցանել:  
ՈՒՐԱԽԱՅՈՒՑԻՉ, տե՛ս ՈՒՐԱԽԱՐԱՐ:  
ՈՒՐԱԽԱԿԵՑ, ա. Ուրախալից, ուրախա-  
րար:  
ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ, գ. 1. Բերկրութիւն, խըն-  
դութիւն, ցնծութիւն, զուարթութիւն: 2.  
Խրախութիւն, խրախուք, խրախճանք,  
խնճոյք, զինարբուք:  
ՈՒՐԱՆԱԼ, նբ. չբ. Յուրաստ լինել կալ,  
ժխտել, մերժել, հրաժարել, զբժել, անտես  
առնել, անտեսել:  
ՈՒՐԱՆՕՐ, մ. Ուր:  
ՈՒՐԱՍՏ, գ. Ուրացութիւն, ուրացող:  
- ՅՈՒՐԱՍՏ ԼԻՆԵԼ՝ ԿԱԼ, տե՛ս ՈՒՐԱ-  
ՆԱԼ:  
ՈՒՐԱՅԱԿԱՆ, ա. Ուրացող:  
ՈՒՐԱՅԵԱԼ, տե՛ս ՈՒՐԱՅՈՂ:  
ՈՒՐԱՅՈՂ, ա. գ. Ուրացեալ:  
ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ, գ. Բացասութիւն,  
ապաստութիւն, հրաժարումն:  
ՈՒՐԴ, տե՛ս ԱՌՈՒ:  
ՈՒՐԵՄՆ, Ղ. 1. Ապա, ապա ուրեմն, այ-  
սուհետև, ուստի, արդ: 2. Իմն, ինչ: 3.  
մ. Ուրեք, երբէք, երբեմն: 4. Համարեա՛  
թէ, իբր թէ, զրեթէ, գողցես:  
ՈՒՐԵՔ, մ. 1. Երբէք, երբեմն, ուրեմն: 2.  
գ. Իմն, ինչ:  
- Է ՈՒՐԵՔ, ՈՒՐԵՔ ՈՒՐԵՔ. Երբեմն, եր-  
բէք երբէք, ի տեղիս տեղիս:  
ՈՒՐԻՇ, տե՛ս ՈՐԻՇ:  
ՈՒՐԿԱՆԱԼ, չբ. Բորոտել:  
ՈՒՐԿԱՆՈՅ, գ. Գողենոց:  
ՈՒՐԿՈՒԹԻՒՆ, գ. Գողութիւն, բորոտու-  
թիւն:  
ՈՒՐՈՅՆ, մ. 1. Որիչ, ուրիչ, զատ, մեկու-  
սի, առանձինն: 2. Նիդ. Բաց ի, առանց: 3.  
ա. Անմասն: 4. Իւրական, յատուկ, սեպ-  
հական, առանձնական:  
- ՈՒՐՈՅՆ ՈՒՐՈՅՆ. Որիչ որիչ, զատ ի  
զատ:

ՈՒՐՈՅՆԱՆԱԼ, չբ. Մեկուսանալ, առանձնանալ:  
ՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ, գ. Մեկուսութիւն, բաժանումն:  
ՈՒՐՈՒ, գ. Ուրուական, Հոգէգէշ:  
ՈՒՐՈՒԱԿԱՆ, գ. 1. Պատրանք, տեսիլ, ցնորք: 2. Կուռք: 3. Հոգէգէշ:  
ՈՒՐՈՒԱՊԱՇՏ, ա. Կռապաշտ, կռապաշտական, դիցապաշտ:  
ՈՒՐՈՒԿ, ա. Բորոտ, պիսակոտ, քոսոտ:  
ՈՒՐ ՈՒՐՈՅՆ, Ուրոյն ուրոյն, զատ ի զատ:  
ՈՓ, գ. Խոռոչ, խորշ, փոս, գուբ, վիհ:  
ՈՔ, գ. Ոմն:  
ՈՔՈՋ, տե՛ս ԱԿՔԱՆ:

## Չ

ՉԱԶԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱԶՆՈՒՈՒԹԻՒՆ:  
ՉԱԶՆՈՒՈՒԹԻՒՆ, գ. Չազգականութիւն:  
ՉԱԽՈՐԺԱԿԱՆ, ա. Անախորժ:  
ՉԱՆԱՐԴԱԳՈՒՐԴ, ա. Վատթար:  
ՉԱՆԶՆԱԽՈՐ, ա. Անանձն:  
ՉԱՆՍԱԿԱՆ, ա. Անհնազանդ, ստամբակ:  
ՉԱՆՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ, գ. Անհնազանդութիւն, անսաստութիւն:  
ՉԱՋՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անյաջողութիւն, ձախորդութիւն, ձախողանք:  
ՉԱՐ, ա. 1. Վատթար, յոռի, ապիրատ, անզգամ, անօրէն: 2. Վնասակար, դժընդակ, անախորժ: 3. Փուտ, խոտան: 4. գ. Չարութիւն, չարիք: 5. Սատանայ: 6. մ. Չարաբար, չարաչար:  
- ՉԱՐԱԻ, ՉԱՐԵԱԻ, ՉԱՐԻԻ, ՉԱՐՈՎ, տե՛ս ՉԱՐ (6):  
- ՉԱՐ ԱՌԵՆԵԼ՝ ԳՈՐԾԵԼ, տե՛ս ՉԱՐԱՐԱՐԵԼ:  
ՉԱՐԱԲԱԽՏ, տե՛ս ՉԱՐԱԲԱՍՏ:

ՉԱՐԱԲԱՆ, ա. Չարալեզու, չարասաց:  
ՉԱՐԱԲԱՆԵԼ, տե՛ս ՉԱՐԱԽՕՍԵԼ:  
ՉԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ:  
ՉԱՐԱԲԱՍՏ, ա. 1. Դժբախտ, թշուառ, թշուառական: 2. Չարադե, ժանտ, անըզգամ:  
ՉԱՐԱԲԱՍՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐԱԴԻՒՈՒԹԻՒՆ:  
ՉԱՐԱԲԱՐ՝, տե՛ս ՉԱՐ (6):  
ՉԱՐԱԲԱՐ՝, տե՛ս ՉԱՐԱԲԱՐՈՅ:  
ՉԱՐԱԲԱՐՈՅ, ա. 1. Չարաչար, չարաբարու, վատաբարոյ, չարակամ, անզգամ, անզգայ, անմիտ: 2. Չարածճի:  
ՉԱՐԱԲԱՐՈՒ, տե՛ս ՉԱՐԱԲԱՐՈՅ:  
ՉԱՐԱԲԱՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Չարակամութիւն, վատաբանութիւն, անզգամութիւն, ամարդութիւն: 2. Չարարուեստութիւն, խորամանկութիւն, դաւ:  
ՉԱՐԱԳԱԶԱՆ, ա. Չարածճի:  
ՉԱՐԱԳԱՆԵԼ (իմ), չբ. Վշտագնել:  
ՉԱՐԱԳԵՂ, ա. Տգեղ:  
ՉԱՐԱԳԻԻՏ, ա. Չարահնար, չարիմաց:  
ՉԱՐԱԳԼՈՒԽ, ա. Չարաբարոյ:  
ՉԱՐԱԳՈՅՆ<sup>1</sup>, ա. Վատթարազոյն, յոռեզոյն:  
ՉԱՐԱԳՈՅՆ<sup>2</sup>, ա. Չարագեղ, ժանտատեսիլ:  
ՉԱՐԱԳՈՐԾ, ա. 1. Ապիրատ: 2. Վնասակար, չարարար: 3. Դաւաճան, չարարուեստ, խորամանկ:  
ՉԱՐԱԳՈՐԾԱԲԱՐ, մ. Չարաբար:  
ՉԱՐԱԳՈՐԾԵԼ, նբ. Խարզախել, դաւաճանել:  
ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. 1. Չարութիւն, ոճիր: 2. Չարարուեստութիւն, դաւաճանութիւն:  
ՉԱՐԱԳՈՒԹ, ա. Անդութ, անազորոյն:  
ՉԱՐԱԳՐԳԻՒ, ա. Չարայոյզ:  
ՉԱՐԱԴԵԻ, ա. (յուճական ոճով) Չարադիւակ, չարաբաստ, թշուառ, թշուառական:

ՉԱՐԱ ԴԵԻՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐԱ ԴԻՒՆՈՒԹԻՒՆ:

ՉԱՐԱ ԴԷՄ, ա. Չառադէմ, ժանտատեսիլ:

ՉԱՐԱ ԴժՆԵԱՅ, ա. Դժնդակ:

ՉԱՐԱ ԴԻՒԱԿ, տե՛ս ՉԱՐԱ ԴԵԻՆ:

ՉԱՐԱ ԴԻՒԹ, ա. Չարագործ:

ՉԱՐԱ ԴԻՒՆՈՒԹԻՒՆ, գ. Չարաբաստու-  
թիւն, թշուառութիւն:

ՉԱՐԱԶԳԵԱՅ, ՉԱՐԱԶԳԻ, ա. 1. Վատա-  
տոհմիկ: 2. Չարատեսակ:

ՉԱՐԱԶՐԱԻ, ա. Ողորմելի:

ՉԱՐԱԹԻՒՐ, ա. Խեղաթիւր:

ՉԱՐԱԹՈՅՆ, ա. Թունալից, ժանտ, վնա-  
սակար:

ՉԱՐԱՒԵԶՈՒ, ա. 1. Չարախօս, չարաբան,  
վատախօս: 2. Հայհոյիչ:

ՉԱՐԱՒԼՈՒԿ, ա. 1. Մոլեգնեալ, խոշ-  
տանգեալ, վարակեալ: 2. Խոշտանգիչ,  
չարչարիչ, չարատանջ:

ՉԱՐԱԽՈՂ, տե՛ս ՉԱՐԱԽՈՂՆ:

ՉԱՐԱԽՈՂՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Չարախորհու-  
թիւն, չարամտութիւն: 2. Յանդգնու-  
թիւն: 3. Անմտութիւն:

ՉԱՐԱԽՈՂԺԱԿ, ա. Չարասէր, չարակամ:

ՉԱՐԱԽՈՂՆ, ա. 1. Չարամիտ, չարախոր-  
հուրդ: 2. Ժանտ, անզգամ: 3. Չարագործ,  
վնասակար:

ՉԱՐԱԽՈՂՆՈՂ, տե՛ս ՉԱՐԱԽՈՂՆ:

ՉԱՐԱԽՈՂՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐԱԽՈՂ-  
ՆՈՒԹԻՒՆ:

ՉԱՐԱԽՈՂՆՈՒԹԻՒՆ, ա. 1. Չարախորհ, չա-  
րակամ, անզգամ: 2. Չարարուեստ, դա-  
ւաճան:

ՉԱՐԱԽՈՂՆՈՂՆՈՒԹԻՒՆ, գ. Չարախո-  
հութիւն, դաւաճանութիւն:

ՉԱՐԱԽՏԱԿԱՆ, ա. 1. Վնասակար: 2.  
Թշուառ:

ՉԱՐԱԽՏԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Չարակրու-  
թիւն:

ՉԱՐԱԽՏԱՎԱՏ, ՉԱՐԱԽՏԱՎԱՐ, ա. մ.  
Անտանելի, դժնդակ, դաժան:

ՉԱՐԱԽՈՍ, ա. գ. 1. Չարաբան, չարալե-

զու, պարսաւաղիբ, վատախօս, քսու, զըր-  
պարտիչ: 2. Բանարկու, սատանայ:

– ՉԱՐԱԽՈՍ ԼԻՆԵԼ, տե՛ս ՉԱՐԱԽՈՍԵԼ:

ՉԱՐԱԽՈՍԵԼ, չբ. և նբ. Չարախօս լինել,  
բամբասել, զրպարտել, ամբաստանել:

ՉԱՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ, գ. 1. Բամբասանք,  
բանասարկութիւն, զրպարտութիւն: 2.  
Ամբաստանութիւն, դատախազութիւն,  
մեղադրանք:

ՉԱՐԱԾԵՐ, ա. Դառնածեր:

ՉԱՐԱԿԱՄ, ա. Չարասէր, չարագործ,  
չարամիտ, անզգամ:

ՉԱՐԱԿԱՄՐԱՐԱՐ, մ. Անզգամաբար:

ՉԱՐԱԿԱՄՈՒԹԻՒՆ, գ. Անզգամութիւն,  
չարութիւն:

ՉԱՐԱԿՆ, ա. Չարակնեայ, յաչաղկոտ,  
չարայաչաղ, չարանախանձ, նախանձող,  
մախող:

ՉԱՐԱԿՆԵԱՅ, տե՛ս ՉԱՐԱԿՆ:

ՉԱՐԱԿՆԵԼ, չբ. և նբ. Յաչաղել, նա-  
խանձել, մախալ:

ՉԱՐԱԿՆՃԻՒ, ա. Չարակամ:

ՉԱՐԱԿՆՈՏ, տե՛ս ՉԱՐԱԿՆ:

ՉԱՐԱԿՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Յաչաղանք, յա-  
չաղութիւն, մախանք: 2. Ժլատութիւն,  
անյագութիւն:

ՉԱՐԱԿՐՈՒԹԻՒՆ, գ. Չարչարանք, տա-  
ռապանք, վիշտ:

ՉԱՐԱՀԱՄԲԱԻ, ա. Չարահոչակ:

ՉԱՐԱՀԱՄԲԱԻԵԼ, նբ. Չարախօսել,  
բամբասել:

ՉԱՐԱՀԱԻԱԿ, ա. գ. Չարախօս:

ՉԱՐԱՀԱԻԱՏ, ա. Չարափառ, անզգամ:

ՉԱՐԱՀՆԱՐ, ա. Չարարուեստ, նենգաւոր:

ՉԱՐԱՀՆԱՐՈՒԹԻՒՆ, գ. Խարդախանք,  
խարդախութիւն, նենգութիւն, նենգաւո-  
րութիւն, անզգամութիւն:

ՉԱՐԱՀՈՏ, ա. Ժահահոտ, շարաւահոտ,  
դառնահոտ:

ՉԱՐԱՀՈՏՈՒԹԻՒՆ, գ. Չարահոտու-  
թիւն, զարշահոտութիւն, ժահահոտու-  
թիւն:

ՉԱՐԱՀՆՉԱԿ, տե՛ս ՉԱՐԱՀԱՄԲԱԿ:  
ՉԱՐԱԶԱՅՆ, ա. 1. Անախորժ, անյար-  
մար: 2. Չարահոչակ: 3. Հայհոյական:  
ՉԱՐԱՂԱՆԴ, ա. Աղանդաւոր:  
ՉԱՐԱՂԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. Մոլորութիւն:  
ՉԱՐԱՂԷՏ, ա. Դժնդակ, անբերելի, ան-  
տանելի:  
ՉԱՐԱՃՃԻ, ա. Չարաբարոյ:  
ՉԱՐԱՄԱՀ, ա. մ. Դառնամահ, վատա-  
մահ, բռնամահ, չարամեռ:  
ՉԱՐԱՄԱՆԿ, տե՛ս ԽՈՐԱՄԱՆԿ:  
ՉԱՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ, տե՛ս ԽՈՐԱՄԱՆ-  
ԿՈՒԹԻՒՆ:  
ՉԱՐԱՄԲԵՐ, ա. Դժոխքներ, դժուարա-  
կիր, անբերելի:  
ՉԱՐԱՄԵՌ, ա. Չարամահ:  
ՉԱՐԱՄԻՏ, ա. Չարախորհ, չարագործ,  
նենգաւոր:  
ՉԱՐԱՄՈԳԱԿԱՆ, ա. Կախարդական:  
ՉԱՐԱՄՈՅՆ, ա. Տառապեալ:  
ՉԱՐԱՄՈՒՅՑ, ա. Անյիշաչար, անոխա-  
կալ:  
ՉԱՐԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Չարախոհութիւն,  
չարխորհրդութիւն:  
ՉԱՐԱՅԱՉԱՂ, ա. Չարակն, չարանա-  
խանձ:  
ՉԱՐԱՅՈՅՁ, ա. Չարագրգիւ, խոռվա-  
րար:  
ՉԱՐԱՅՈՒՇ, ա. Յիշաչար, ոխակալ:  
- ՉԱՐԱՅՈՒՇ ԼԻՆԵԼ, տե՛ս ՈՒՆԱՆԱԼ:  
ՉԱՐԱՅՈՒՄ, ա. Չարակամ, չարամիտ,  
չարասէր:  
ՉԱՐԱՆԱԼ, չբ. 1. Վատթարանալ, անըզ-  
գամել: 2. Զչարել, դժկամակել, զայրա-  
նալ:  
ՉԱՐԱՆԱԽԱՆՁ, ա. Չարայաչաղ, չա-  
րակն, մախող:  
ՉԱՐԱՆԻԹ, ա. Չարարուեստ:  
ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆ, գ. Զօշաքաղութիւն:  
ՉԱՐԱՇՆՈՒԿ, ա. Չարաղէտ, դժնդակ,  
անողորմ:  
ՉԱՐԱՇՈՒԷՐ, տե՛ս ՎԱՏՇՈՒԷՐ:

ՉԱՐԱՇՈՒՆՁ, ա. Մահառիթ, դժնդակ:  
ՉԱՐԱՇՈՒՔ, ա. 1. Անպատիւ, անարգ: 2.  
Վատթար, դժնդակ, դառն, ժանտ, խիտ:  
ՉԱՐԱՉԱՐ, ա. 1. Սաստիկ, դառն, դժն-  
դակ, անտանելի, անհնարին, անօրէն: 2.  
մ. Չարապէս, սաստկապէս, անողորմ:  
ՉԱՐԱՊԱՇՏ, ա. 1. Մոլորեալ, չարափառ:  
2. Կռապաշտ, կռապարիշտ:  
ՉԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. Չարափառու-  
թիւն:  
ՉԱՐԱՊԱՇՏՕՆ, ա. Չարապաշտ, կռա-  
պարիշտ:  
ՉԱՐԱՊԱՏԱՀ, ա. Չախող, վնասակար:  
ՉԱՐԱՊԱՏԿԵՐ, ա. Գարշատեսիլ, չարա-  
ղէմ, ճառաղէմ:  
ՉԱՐԱՊԷՍ, մ. Չարաբար, չարաչար, չա-  
րեօք:  
ՉԱՐԱՌ, ա. 1. Չարասէր, չարայօժար: 2.  
Մոլի:  
ՉԱՐԱՍԱՅ, ա. Չարաբան, չարախօս:  
ՉԱՐԱՍԷՐ, ա. Չարամիտ, չարակամ,  
չար:  
ՉԱՐԱՍԿԻԶԲՆ, տե՛ս ՍԿԶԲՆԱՉԱՐ:  
ՉԱՐԱՍՏԵՂՄ, ա. Չարապատկեր, տղեղ:  
ՉԱՐԱՎԱԽԱՇ, ա. Վաւարտական:  
ՉԱՐԱՏԱՆՁ, ա. Չարալլուկ:  
ՉԱՐԱՏԵԱՅ, ա. Բարեսէր, առաքինի:  
ՉԱՐԱՏԵՍ, ՉԱՐԱՏԵՍԱԿ, ՉԱՐԱՏԵՍԻԼ,  
ա. Գարշ, յոռի, չարաղէմ, ժանտ:  
ՉԱՐԱՐԱՐ, ա. Չարագործ:  
ՉԱՐԱՐԱՐԵԼ, նբ. չբ. Չար առնել՝ գոր-  
ծել:  
ՉԱՐԱՐՈՒԵՍ, ա. Չարանիւթ, չարա-  
հնար, չարախորհ, չարագործ:  
ՉԱՐԱՐՈՒԵՍՈՒԹԻՒՆ, գ. Չարախոհու-  
թիւն, խորամանկութիւն:  
ՉԱՐԱՅՈՒՅՆԵԼ, չբ. 1. Զայրացուցա-  
նել, գրգռել: 2. Չարչարել, նեղել:  
ՉԱՐԱՓԱՌ, ա. Մոլորեալ, աղանդաւոր,  
հերետիկոս:  
ՉԱՐԱՓԱՌՈՒԹԻՒՆ, գ. Աղանդ:  
ՉԱՐԵԱՅԱՊԱՐՏ, ա. Մեղապարտ:

ՉԱՐԸՄԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Չարակրութիւն:  
ՉԱՐԸՆԿԱԼ, ւ. Անյազ:  
ՉԱՐԺԱՆԻ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆ:  
ՉԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆՈՒ-  
ԹԻՒՆ:  
ՉԱՐԻՄԱՍՏ, ՉԱՐԻՄԱՅ, ւ. Չարամիտ,  
չարախորհուրդ, չարարուեստ, նենգա-  
ւոր, դաւաճան:  
ՉԱՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ, գ. Չարամտութիւն,  
չարարուեստութիւն, չարահայրութիւն:  
ՉԱՐԻՔ, գ. 1. Չարութիւն, մեղք, յան-  
ցանք: 2. Վնաս, արկած, աղէտ, թշուա-  
ռութիւն:  
- ՉԱՐԵՕՔ, մ. Չարաւ, չարապէս, չարա-  
չար:  
ՉԱՐԽՈՐՀՐԴԴՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐԱ-  
ՄԸՏՈՒԹԻՒՆ:  
ՉԱՐԿԱՄ, տե՛ս ՉԱՐԿԱՄ:  
ՉԱՐՀԱՄԲԱԻ, տե՛ս ՉԱՐԱՀԱՄԲԱԻ:  
ՉԱՐՈՒԹԻՒՆ, գ. Չարիք, մեղք, անզգա-  
մութիւն, վատթարութիւն:  
ՉԱՐՉԱՐԱԿԱՆ, ւ. Չարչարելի, կրա-  
կան:  
ՉԱՐՉԱՐԱԿԻՑ, ւ. 1. Ճգնակից: 2. Կարե-  
կից, կրակից, փտակից, ցաւակից:  
- ՉԱՐՉԱՐԱԿԻՑ ԼԻՆԵԼ, տե՛ս ՉԱՐՉԱ-  
ՐԱԿՅԵԼ (Իմ):  
ՉԱՐՉԱՐԱԿՅԵԼ (Իմ), չբ. Չարչարակից  
լինել:  
ՉԱՐՉԱՐԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. 1. Խնայակցու-  
թիւն: 2. Կարեկցութիւն, ցաւակցութիւն:  
ՉԱՐՉԱՐԱՆՔ, գ. Չարչարութիւն, տան-  
ջանք, հարուած, վիշտ, ցաւ, նեղութիւն,  
կիրք:  
- ՉԱՐՉԱՐԱՆՔՆ, ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ.  
(եկեղց.) Չատիկ:  
ՉԱՐՉԱՐԵԼ, նբ. Նեղել, խոշտանգել, աշ-  
խատ առնել, հարստահարել:  
ՉԱՐՉԱՐԵԼԻ, տե՛ս ՉԱՐՉԱՐԱԿԱՆ:  
ՉԱՐՉԱՐԻՉ, ւ. Տանջիչ:  
ՉԱՐՉԱՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉԱՐՉԱՐԱՆՔ:  
ՉԱՓ, գ. 1. Քանակ, քանակութիւն, որ-

քանութիւն, բաւ: 2. Չափաւորութիւն,  
եղանակ, տարազ, պայման, համեմատու-  
թիւն, զուգաչափութիւն: 3. Ոտն (վան-  
կերի տաղաչափութեան մէջ): 4. ւ. Չա-  
փաւոր, վայելուչ: 5. նխդ. Մինչև, իբր,  
չուրջ:  
- ՉԱՓ ԻՆՉ, ՉԱՓ ՄԻԱՅՆ, ՉԱՓ ՈՔ.  
Այսչափ, այնչափ, չափով, չափաւոր,  
դուզնաքայ: 2. ՉԱՓՈՎ, մ. ւ. Չափաւորապէս, չա-  
փաւոր:  
- ՉՉԱՓ ԱՌՆՈՒԼ. Չփորձ առնուլ, փոր-  
ձել, քննել:  
- Ի ՉԱՓՈՒ ՈՒՆԵԼ, տե՛ս ՉԱՓԱՒՈՐԵԼ:  
ՉԱՓԱԲԱՐ, մ. Չափով, չափաւորապէս,  
չափաքերապէս:  
ՉԱՓԱԲԵՐ, ւ. 1. Չափաւոր, զգաստ: 2.  
Դուզնաքայ:  
ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆ, ւ. Չափաւոր:  
ՉԱՓԱԲԵՐԱՊԷՍ, տե՛ս ՉԱՓԱԲԱՐ:  
ՉԱՓԱԲԵՐԵԼ, նբ. Յարմարել:  
ՉԱՓԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Չափակցութիւն,  
համեմատութիւն, յարմարութիւն:  
ՉԱՓԱԿԻՐ, ւ. Չափաքեր, չափաւոր:  
ՉԱՓԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Չուգաչափու-  
թիւն:  
ՉԱՓԱՀԱՍԱԿ, ւ. Կատարելահասակ:  
ՉԱՓԱՆ, գ. Չափ:  
ՉԱՓԱՐ, տե՛ս ՅԱՆԿԻ:  
ՉԱՓԱՐԱՆ, գ. Չափ (վերցրած չափը):  
ՉԱՓԱՒՈՐ, ւ. 1. Համեմատ, յարմար: 2.  
Միջասահման, միջակ: 3. Պարեկշտ, հա-  
մեստ, զգաստ: 4. Նուաստ, խոնարհ:  
- ՉԱՓԱՒՈՐ ՄԻ, մ. Չափաւորապէս,  
փոքր մի:  
ՉԱՓԱՒՈՐԱԳՈՅՆ, ւ. Նուազ:  
ՉԱՓԱՒՈՐԱՊԷՍ, մ. Չափով, միջակա-  
բար:  
ՉԱՓԱՒՈՐԵԼ, նբ. Ի չափու ունել:  
ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Չափ: 2. Չա-  
փակցութիւն, յարմարութիւն: 3. Պար-  
կեշտութիւն:

ՉԲԱՐԻ, աս. Անբարի, չար:  
ՉԲՆԱԿԱԿՈՐ, ՉԲՆԱԿՈՐ, աս. Անբու՛ն,  
անբնական:  
ՉԳԻՏԱՆՔ, տե՛ս ԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ:  
ՉԳԻՏՈՒ, ՉԳԻՏՈՒՆ, աս. Անգէտ, տգէտ,  
անիմաստ, տխմար:  
ՉԳՈՅ, տե՛ս ԱՆ ԳՈՅ:  
ՉԵՐԷՅ, գ. Չքահանայ:  
ՉԵԻ, ՉԵԻ ԵԻՍ, մ. 1. Մինչ չև: 2. (յու՛ն.  
նմանողութեամբ) Ոչ ևս:  
ՉԷ<sup>1</sup>, տե՛ս ՉԻՔ:  
ՉԷ<sup>2</sup>, տե՛ս ԱՆ ԳՈՅ:  
ՉԷԱԿԱՆ, աս. Արարած:  
ՉԷՈՒԹԻՒՆ, գ. Անէութիւն, անգոյու-  
թիւն, ոչնչութիւն, ոչինչ, չգոյ:  
ՉԻՂՋ, գ. (կենդբ.) Չղջիկան, հրամուկ:  
ՉԻՆՉ, աս. գ. 1. Ոչինչ, չէ, չգոյ: 2. Դուզ-  
նաքեայ, տկար:  
ՉԻՔ<sup>1</sup> (պակասաւոր բայ). Չէ:  
ՉԻՔ<sup>2</sup>, գ. Չէ, չգոյ, պակասութիւն:  
- ՉԻՔ ԼԻՆԵԼ. Չքանալ:  
ՉԿԱՄՈՒԹԻՒՆ, գ. Դժկամակութիւն:  
ՉԿԱՅ, աս. Անկայուն, անցաւոր:  
ՉԿԵՆ ԴԱՆԻ, տե՛ս ԱՆ ԿԵՆ ԴԱՆ:  
ՉԿԵՑՈՒ, աս. Անգործ, անպիտան:  
ՉԿԵՑՈՒԹԻՒՆ, գ. Անգործութիւն:  
ՉՀԱԿԱՏԱԼԻ, աս. Անհաւատալի:  
ՉՀԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆ ՀՆԱԶԱՆ ԴՈՒ-  
ԹԻՒՆ:  
ՉՁԵՌՆՀԱՍ, աս. Անձեռնհաս, անգործ:  
ՉՂՋԻԿԱՆ, տե՛ս ՉԻՂՋ:  
ՉՄԱՐԴԻ, աս. Անմարդի, տմարդի:  
ՉՄԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Տմարդութիւն:  
ՉՄԱՐԹՈՒ, ՉՄԱՐԹՈՒՆ, աս. Անճարակ,  
անպէտ:  
ՉՄՆԱԼԻ, աս. Անցաւոր:  
ՉՄՈՌԱՅԱԿԱՆ, աս. Անմոռանալի,  
անանց:  
ՉՅԱՆՑՈՒՅԵԱԼ, աս. Անմեղ:  
ՉՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ձախորդութիւն,  
վտանգ, արկած:  
ՉՅՈՒՍԱԼԻ, աս. Անյուսալի:

ՉՆԱՇԽԱՐՀԻԿ, աս. Գերաշխարհիկ, նո-  
րահրաշ, գերապանծ, ահաւոր, հրաշա-  
փառ:  
ՉՆՁԵԱՆ, տե՛ս ՉՆՁԻՆ:  
ՉՆՁԻԿ, աս. Չնչին, աննշան, փոքրիկ:  
ՉՆՁԻՆ, աս. Չնչիկ, դոյզն, աննշան, տը-  
կար, անպիտան, սին, սնոտի:  
ՉՆՁԻՆԱԳՈՅՆ, աս. Ոչինչ, սնոտի:  
ՉՈՆԱԿԱԼ, տե՛ս ԱՆՈՆԱԿԱԼ:  
ՉՈՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆՈՆԱԿԱԼ-  
ԼՈՒԹԻՒՆ:  
ՉՈՐ, աս. Ցամաք, չորուտ (խոնաւութիւ-  
նից գուրկ):  
ՉՈՐԱԲԵԿ, տե՛ս ԱՇՏՈՒՃ:  
ՉՈՐԱԿԵՐՈՒԹԻՒՆ, գ. Պահացողութիւն:  
ՉՈՐԱՅԻՆ, աս. Չորանուտ, չորուտ, ցա-  
մաքային:  
ՉՈՐԱՆԱԼ, չբ. Ցամաքել, դօսանալ:  
ՉՈՐԱՆՈՒՏ, աս. Ցամաքուտ, չորային:  
ՉՈՐԱՅՈՒՑԱՆԵԼ, պբ. Ցամաքեցուցա-  
նել:  
ՉՈՐԵՔԱՆԿԻՒՆ, ՉՈՐԵՔԱՆԿԻՒՆԻ, աս.  
Քառանկիւն, քառակուսի, չորեքկուսի:  
ՉՈՐԵՔՎԻՆԵԱՆ, աս. Քառազուրի, չո-  
րեքտառեան (Աւետարանի մասին):  
ՉՈՐԵՔԳՐԵԱՆ, աս. Քառագիւր:  
ՉՈՐԵՔԴԻՄԵԱՆ, ՉՈՐԵՔԴԻՄԻ, աս. Քա-  
ռաղէմ, չորեքկերպեան:  
ՉՈՐԵՔԴԻՄԵԱՆ, աս. գ. Սատեր:  
ՉՈՐԵՔԵԱՆ, թ. Չորեքին:  
ՉՈՐԵՔԵԶԵՐԵԱՆ, աս. Չորեքձագեան:  
ՉՈՐԵՔԵՐԻՎԱՐԵԱՆ, աս. Քառաձի:  
ՉՈՐԵՔԻՆ, տե՛ս ՉՈՐԵՔԵԱՆ:  
ՉՈՐԵՔՄԱԳԵԱՆ, տե՛ս ՉՈՐԵՔԵԶԵՐԵԱՆ:  
ՉՈՐԵՔԿԱՆԳԵԱՆ, աս. Քառականգուն:  
ՉՈՐԵՔԿԱՆԳԵԱՆ, աս. Քառակարգեան:  
ՉՈՐԵՔԿԵՐՊ, ՉՈՐԵՔԿԵՐՊԵԱՆ, աս. Քա-  
ռակերպ, չորեքդիմեան, չորեքդիմի:  
ՉՈՐԵՔԿԱՆԿԻ, մ. Չորիցս, չորիցս ան-  
գամ:  
ՉՈՐԵՔԿՈՒՄԻ, աս. Քառակուսի, չորեք-  
անկիւնի:

ՉՈՐԵՔՆԻԻԹԵԱՅ, աս. Քառասնիւթ, քա-  
ռանիւթեայ:  
ՉՈՐԵՔՏԱՌԵԱՆ, տե՛ս ՉՈՐԵՔԳԼԽԵԱՆ:  
ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՔԵԱՆ, թ. Չորեքտասա-  
նեքիւն:  
ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՔԻՆ, տե՛ս ՉՈՐԵՔՏԱ-  
ՍԱՆԵՔԵԱՆ:  
ՉՈՐԵՔՏԱՐՐԵԱՆ, աս. Քառասորբեան:  
ՉՈՐԻՐ, թ. Չորրորդ:  
ՉՈՐԻՅՍ, ՉՈՐԻՅՍ ԱՆԳԱՄ, տե՛ս ՉՈ-  
ՐԵՔԿՆԱԿԻ:  
ՉՈՐՈՒՏ, տե՛ս ՉՈՐ:  
ՉՈՐՐԵԱԿ, թ. Քառեակ:  
ՉՈՐՐՈՐԴ, թ. 1. Չորիւր: 2. Չորրեակ, քա-  
ռեակ: 3. Քառորդ:  
ՉՈՐՐՈՐԴՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. Շամշտու-  
թիւն:  
ՉՈՐՔ, թ. Քառ:  
ՉՈՐՔՈՏԱՆԻ, գ. Հետեակ:  
ՉՈՒ, գ. 1. Երթ, պղթ, չուարարութիւն,  
ուղեղորութիւն, շարժումն, տեղափոխու-  
թիւն: 2. Բանակ, կարաւան: 3. Հանդեր-  
ձանք, աղխ:  
- ՉՈՒ ԱՌՆԵԼ, Ի ՉՈՒ ԱՆԿԱՆԵԼ (Իմ),  
տե՛ս ՉՈՒԵԼ:  
ՉՈՒԱՆ, գ. Առասան, ճոպան, պարան,  
կառան, խառան:  
ՉՈՒԱՌ, տե՛ս ԹՇՈՒԱՌ:  
ՉՈՒԱՌԱԳՈՅՆ, տե՛ս ԹՇՈՒԱՌԱԳՈՅՆ:  
ՉՈՒԱՌԱՆԱԼ, տե՛ս ԹՇՈՒԱՌԱՆԱԼ:  
ՉՈՒԱՌՈՒԹԻՒՆ, տե՛ս ԹՇՈՒԱՌՈՒԹԻ-  
ՒԹԻՒՆ:  
ՉՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ՉՈՒ (1):  
ՉՈՒԵԼ, չբ. Չու առնել, ի չու անկանել:  
ՉՈՒԽԱՅ, գ. Յիսի:  
ՉՊԷՏ, ՉՊԻՏՈՅ, աս. Անպէտ, անպիտան,  
չնչիւն:  
ՉՔԱՀԱՆԱՅ, տե՛ս ՉԵՐԷՅ:  
ՉՔԱՆԱԼ, չբ. 1. Չիք լինել, չքոտել, չբել,  
անհետանալ, աներևութանալ: 2. Պակա-  
սել, նուազել, խաւարել (լուսատուների  
մասին):

ՉՔԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Անհետ առնել,  
աներևութացուցանել:  
ՉՔԱԻՈՐ, աս. 1. Աղքատ, տնանկ, ցակա-  
նեալ: 2. փխբ. Անշուք, անբաժ, յետին:  
ՉՔԱԻՈՐԱԿԱՆ, աս. Անշուք, անլոյս:  
ՉՔԱԻՈՐԵԼ (Իմ), չբ. 1. Աղքատանալ,  
կարօտել: 2. Տկարանալ, յետնել, վերջա-  
նալ:  
ՉՔԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Աղքատութիւն,  
տնանկութիւն: 2. Պակասութիւն:  
ՉՔԵԼ (Իմ), տե՛ս ՉՔԱՆԱԼ:  
ՉՔՄԵՂ, աս. Անմեղ:  
ՉՔՆԱՂ, աս. 1. Անմամն, չնաշխարհիկ,  
պայծառագեղ, գերապանծ, հոյակապ,  
սքանչելի: 2. Անակնունելի, անակնկալ:  
3. մ. Սքանչելապէս:  
ՉՔՆԱՂԱԳԵՂ, աս. Ամենագեղ, հրաշա-  
գեղ, գեղեցկահրաշ:  
ՉՔՆԱՂԱԳԻԻՏ, աս. Դժուարագիւտ, ան-  
գիւտ, անմամն:  
ՉՔՆԱՂԱԴԷՄ, աս. Գեղեցկադէմ:  
ՉՔՆԱՂԱՋԱՐԴ, աս. Գեղեցկազարդ:  
ՉՔՆԱՂԱԿԱՆ, տե՛ս ՉՔՆԱՂ:  
ՉՔՆԱՂԱԿԵՐՊ, աս. Գեղեցկատես, գե-  
ղեցկատեսիլ:  
ՉՔՆԱՂԱԿԵՐՏ, աս. Հրաշակերտ, հոյա-  
կապ:  
ՉՔՆԱՂԱՊԷՍ, մ. Գեղեցկապէս, վայել-  
չապէս:  
ՉՔՆԱՂԱՏԵՍ, ՉՔՆԱՂԱՏԵՍԻԼ, աս.  
Չքնադադէմ, գեղեցկադէմ, հրաշագեղ,  
չքնադակերպ:  
ՉՔՈՏԵԼ (Իմ), տե՛ս ՉՔԱՆԱԼ (1):  
ՉՔՈՏԻ, աս. 1. Չնչիւն, աննշան: 2. Տհաս,  
տղայամիտ:  
- ՉՔՈՏԻՔ, գ. Ոչնչութիւն:  
ՉՔՈՒԹԻՒՆ, գ. Տարակուսանք, տարա-  
կոյս, վարանումն:

Պ

ՊԱԳԱՆԵՆ, տե՛ս ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՆ:  
 ՊԱՂԱՏՆ կամ ՊԱՂԱՏՆ, գ. Ապարանք, արքունիք:  
 ՊԱՂԱՐ, գ. 1. Պաղպաջ: 2. Սպի: 3. Կեղ, խոյլ, խաղաւարտ: 4. Խարան, նիշ:  
 ՊԱՂԱՐԱԿԱՊ, ա. Զարդարուն, փողփողեալ:  
 ՊԱԽԱՐԱԿԱՆՔ, գ. Պարսաւանք:  
 ՊԱԽԱՐԱԿԵՆ, նբ. Անգոսնեյ, աղարտեյ, պարսաւել, թշնամանեյ, ըստգտանեյ, բամբասել:  
 ՊԱԽԱՐԱԿՈՒԹԻՒՆ, գ. Պախարականք:  
 ՊԱԽԵՆ, չբ. Պակնուլ, սրտաբեկեյ, ահաբեկ լինեյ:  
 ՊԱԽԵՑՈՒՑԱՆԵՆ, տե՛ս ՊԱԿՈՒՑԱՆԵՆ:  
 ՊԱԽՈՒՄՆ<sup>1</sup>, գ. Պատառումն, բեկումն:  
 ՊԱԽՈՒՄՆ<sup>2</sup>, գ. Սոսկումն, ահ:  
 ՊԱԽՈՒՑ, տե՛ս ԵՐԱՍԱՆԱԿ (1):  
 ՊԱԽՐԷ, գ. 1. Ինչք, ստացուած, պիտոյք, դբամ: 2. Պաճարանք, պաշար: 3. Պաճար, նախիր, անդեայք, արջառ:  
 ՊԱԿԱՍ, ա. 1. Թերի, անկատար, նուազ, սակաւ: 2. մ. Պակասաբար:  
 ՊԱԿԱՍԱԲԱՐ, տե՛ս ՊԱԿԱՍ (2):  
 ՊԱԿԱՍԱԶԵՌՆ, տե՛ս ՍԱԿԱՒԱԶԵՌՆ:  
 ՊԱԿԱՍԱՄԻՏ, ա. Անմիտ, յետսամիտ:  
 ՊԱԿԱՍԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Անմտութիւն, անխելութիւն:  
 ՊԱԿԱՍԱՄՕՐՈՒ, ՊԱԿԱՍԱՄՕՐՈՒՍ, ա. Քարձ:  
 ՊԱԿԱՍԱՊԵՏ, տե՛ս ՍԱԿԱՒԱՊԵՏ:  
 ՊԱԿԱՍԱԽՈՐ, ա. Պակաս, թերի, անկատար:  
 ՊԱԿԱՍԵՆ, չբ. 1. Նուազեյ, կասել, դադարել, տկարանալ: 2. Նուազեյ, լքանել, թալանալ:  
 ՊԱԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՆ, պբ. Նուազեցունցանել, ի բաց բաւնալ:

ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ, գ. 1. Թերութիւն, անկատարութիւն, նուազութիւն: 2. Զքաւորութիւն, յետնութիւն:  
 ՊԱԿԱՍՈՒՄՆ, գ. Պակասութիւն:  
 ՊԱԿԵՑՈՒՑԱՆԵՆ, տե՛ս ՊԱԿՈՒՑԱՆԵՆ:  
 ՊԱԿԵՆԻՆ, չբ. Պակչեյ, պախել, դարհուրել, ապչել, յիմարել:  
 ՊԱԿԵՆՏ, ա. Խենչչ, ցոփ, անառակ, լիտի, վաւաշոտ:  
 ՊԱԿԵՆՏԵՆ (իմ), չբ. Անառակել, շուայտել, անկղիտանալ:  
 ՊԱԿԵՆՏՈՒԹԻՒՆ, գ. Անառակութիւն, խենչչութիւն, վաւաշոտութիւն, ցանկասիբութիւն:  
 ՊԱԿՈՒՄՆ, գ. Պախումն, երկիւղ, ահ:  
 ՊԱԿՈՒՑԱՆԵՆ, պբ. Պախեցուցանել, հիացուցանել, ահացուցանել:  
 ՊԱԿՈՒՑԱՆՈՂԱԿԱՆ, ա. Պակուցանող:  
 ՊԱԿՈՒՑՈՒՄՆ, գ. Պակումն, ահարկութիւն, երկիւղ, ահ:  
 ՊԱԿԶԵՆ (իմ), տե՛ս ՊԱԿՆՈՒՆ:  
 ՊԱՀ, գ. 1. Պահպանութիւն, պահեստ: 2. Բանտարգելութիւն:  
 - ՊԱՀ ԱՐԿԱՆԵՆ. Պահարկել:  
 - ՊԱՀ ՈՒՆԵՆ. Պահել, պահպանել:  
 ՊԱՀԱԽՈՅԶ, տե՛ս ՊԱՀԱՅՈՅԶ:  
 ՊԱՀԱԿ, գ. ա. 1. Պահապան, պահանորդ, պահակապան: 2. Վերակացու, պաշտպան, ոստիկան: 3. Օգնական, ձեռնտու, յանձանձիչ, հոգաբարձու:  
 - ՊԱՀԱԿ ՈՒՆԵՆ՝ ՎԱՐԵՆ, տե՛ս ՏԱՐԱՊԱՐՀԱԿ ՎԱՐԵՆ:  
 ՊԱՀԱԿԱՊԱՆ, տե՛ս ՊԱՀԱԿ (1):  
 ՊԱՀԱԿԵՆ, չբ. Փոյթ առնել՝ ունել:  
 ՊԱՀԱԿԵՐ, գ. Մնուցիչ, դայեակ, դաստիարակ:  
 ՊԱՀԱՅՈՅԶ, ա. գ. Գիշերապահ:  
 ՊԱՀԱՆ Գ, գ. 1. Պահանգակապ: 2. Զբահք, պահպանակ:  
 ՊԱՀԱՆ ԳԱԿԱՊ, տե՛ս ՊԱՀԱՆ Գ (1):  
 ՊԱՀԱՆՈՐԴ, գ. 1. Պահապան, պահպանող, պահակ, պարեկապան, առաջապահ:

2. Յուսուլթք, գրապանակ:  
ՊԱՀԱՆՋԱՆՔ, գ. Պահանջումն:  
ՊԱՀԱՆՋԱՐԱՆ, գ. Դատարան (գատա-  
ւորի նստավայր):  
ՊԱՀԱՆՋԻՉ, ա. 1. Պահանջող: 2. Վրէժ-  
խընդիր:  
ՊԱՀԱՆՋՈՂ, ա. գ. Հարկապահանջ:  
ՊԱՀԱՆՋՈՒՄՆ, գ. Պահանջանք:  
ՊԱՀԱՊԱՆ, գ. 1. Պահպանիչ, պահպա-  
նորդ: 2. Պահպանութիւն, պահ, ամբու-  
թիւն: 3. Գրապանակ, պահանորդ:  
ՊԱՀԱՊԱՆԱՊԵՏ, գ. Պահպանապետ:  
ՊԱՀԱՊԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՊԱՀՊԱՆՈՒ-  
ԹԻՒՆ:  
ՊԱՀԱՐԱՆ, գ. 1. Պահպանարան: 2.  
Դաբաղ: 3. Արկղ, տուփ:  
ՊԱՀԱՐԱՆԵԼ, նբ. Պահել (ամփոփել մի  
բանի մէջ):  
ՊԱՀԱՐԿԵԼ, նբ. Պահ արկանել, պահպա-  
նել:  
ՊԱՀԱՅՈՂ, ա. Պահող, ժուժկալ:  
ՊԱՀԱՅՈՂՈՒԹԻՒՆ, գ. Պահք, ժուժկա-  
լութիւն, չորակերութիւն:  
ՊԱՀԵԼ, նբ. 1. Պահ ունել, պահպանել,  
սպաս առնել, հովանի լինել: 2. Պինդ ու-  
նել, արգելուլ: 3. Թաքուցանել, մթերել:  
4. Ժուժկալել:  
ՊԱՀԵԿ, տե՛ս ՊԱՅԻԿ:  
ՊԱՀԵՍ, գ. 1. Պահուտ, պահումն,  
պահպանութիւն: 2. Մթերք, աւանդ: 3.  
Բանտ:  
ՊԱՀՈՒՍ, տե՛ս ՊԱՀԵՍ:  
ՊԱՀՊԱՆ, տե՛ս ՊԱՀԱՊԱՆ:  
ՊԱՀՊԱՆԱԿ, գ. 1. Զրահք: 2. Գրապա-  
նակ:  
ՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ա. 1. Պահպանիչ, պահ-  
պանող, պահապան, պահպանողական: 2.  
Պշտական, զօրավիգն: 3. Հրամայական:  
4. գ. Հմայեսակ, պահպանակ:  
ՊԱՀՊԱՆԱԿԻՅ, ա. Պահպանական, պահ-  
պանող:  
ՊԱՀՊԱՆԱՊԵՏ, գ. 1. տե՛ս ՊԱՀԱՊԱՆԱ-

ՊԵՏ: 2. Ենթըինապետ, մարդպետ:  
ՊԱՀՊԱՆԱՐԱՆ, գ. Պատասպարան:  
ՊԱՀՊԱՆԵԼ, նբ. Պահպանեցուցանել,  
պաշտպանել, հովանաւորել, պատասպա-  
րել:  
ՊԱՀՊԱՆԵՅՈՒՅԱՆԵԼ, տե՛ս ՊԱՀՊԱ-  
ՆԵԼ:  
ՊԱՀՊԱՆԻՉ, ՊԱՀՊԱՆՈՂ, ա. 1. Պահա-  
պան: 2. Փրկիչ: 3. Տեսուչ:  
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ, տե՛ս ՊԱՀՊԱՆԱ-  
ԿԱՆ:  
ՊԱՀՊԱՆՈՐԴ, տե՛ս ՊԱՀԱՊԱՆ:  
ՊԱՀՊԱՆՈՅ, տե՛ս ՊԱՀԱՊԱՆ:  
ՊԱՀՊԱՆՈՅ, տե՛ս ԲԱՆՏ:  
ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Պահ, պաշտպա-  
նութիւն, հովանի, զգուշութիւն: 2. Գրա-  
պանակ:  
ՊԱՀՔ, գ. Պահացողութիւն, ժուժկալու-  
թիւն, ծոծ:  
ՊԱՂ, գ. Սառն, սառոյց:  
ՊԱՂԱՆԱԼ, տե՛ս ՊԱՂԵԼ (իմ):  
ՊԱՂԱՆ, գ. Համետ:  
ՊԱՂԱՆԵԼ, տե՛ս ՀԱՄԵՏԵԼ:  
ՊԱՂԱՆՉԱԻ, գ. Քարանձաւ, ժայռ:  
ՊԱՂԱՊԱՆԾԱԿԱՆ, ա. Սառնատեսակ,  
վճիտ, յստակ:  
ՊԱՂԱՏ, տե՛ս ՊԱՂԱՏԱՆՔ:  
ՊԱՂԱՏԱԽԱՌՆ, ա. Աղերսալի, թախձա-  
գիւն:  
ՊԱՂԱՏԱՆՔ, գ. Պաղատ, պաղատումն,  
մաղթանք, աղաչանք, աղերսանք,  
թախանձանք, աղօթք:  
ՊԱՂԱՏԵԼ (իմ), չբ. Աղաչել, աղերսել,  
մաղթել, թախանձել:  
ՊԱՂԱՏԵՆ, տե՛ս ՊԱՂԱՏԵՆ:  
ՊԱՂԱՏՈՒՄՆ, տե՛ս ՊԱՂԱՏԱՆՔ:  
ՊԱՂԵԼ, (իմ), չբ. Պաղանալ, սառել,  
սառչել:  
ՊԱՂԷՏ, տե՛ս ՊԱՂԱՏԱՆՔ:  
ՊԱՂՈՒՄՆ, գ. Սառումն:  
ՊԱՂՊԱՂԱԿ, տե՛ս ԲԻԻՐԵՂ:  
ՊԱՂՊԱՋ, տե՛ս ՊԱՂԱՐ (1):

ՊԱՂՊԱԶԱԿ, տե՛ս ՊՂՊԶԱԿ:  
ՊԱՂՊԱԶԵԼ, չբ. Փայլել, փողփողել, շող-  
շողել:  
ՊԱՂՊԱԶՈՒՄԵՆ, գ. Փայլումն, փաղփու-  
մբն:  
ՊԱՂՊԱԶՈՒՆ, ա. Փաղփուճ, փայլուն,  
պայծառ:  
ՊԱՃԱՐ, գ. Նախիր, անդեայ, արջառ,  
դուար:  
- ՊԱՃԱՐՔ, գ. Պաճարանք, հայթայ-  
թանք, հնարք:  
ՊԱՃԱՐԱԲՈՅԾ, ա. Անասնաբոյծ, պաճա-  
րատես, հովիւ:  
ՊԱՃԱՐԱԿԱՆ, ա. գ. Պաճարեղէն,  
պաճար:  
ՊԱՃԱՐԱՄԻՏ, ա. Անմիտ:  
ՊԱՃԱՐԱՆՔ, գ. 1. Պարէն, պէտք, գոյք,  
ինչք: 2. Հնարագիտութիւն, հայթայ-  
թանք, հնարք:  
ՊԱՃԱՐԱՊԷՄ, տե՛ս ԱՆԱՄՆԱԲԱՐ:  
ՊԱՃԱՐԱՏԵՍ, տե՛ս ՊԱՃԱՐԱԲՈՅԾ:  
ՊԱՃԱՐԱՐՕՏ, գ. Արօտ (պաճարի հա-  
մար):  
ՊԱՃԱՐԵԼ, նբ. չբ. Հայթայթել, նիւթել,  
հնարել, ճարտարել, ջանալ:  
ՊԱՃԱՐԵՂԱԲԱՐ, մ. ա. Անասնաբար,  
անասնական:  
ՊԱՃԱՐԵՂԷՆ, ա. Անասնական:  
- ՊԱՃԱՐԵՂԷՆՔ, գ. Անասունք:  
ՊԱՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ, գ. Անասնութիւն,  
անբանութիւն:  
ՊԱՃԵԱՆ, ՊԱՃԷՆ, ՊԱՃԻԿ, տե՛ս ՊԱՏ-  
ՃԷՆ:  
ՊԱՃՈՅՑ, ա. գ. 1. Պաճուճեալ, զարդա-  
րուն: 2. Պաճուճանք, զարդարանք:  
ՊԱՃՈՒՃԱԲԱՆ, ա. Պերճաբան, պանծա-  
բան, ճոռոմաբան:  
ՊԱՃՈՒՃԱԲԱՆԵԼ, չբ. Պերճաբանել, ճո-  
ռոմաբանել:  
ՊԱՃՈՒՃԱԶԱՐԴ, ա. 1. Պաճոյճ, զար-  
դարուն: 2. Պատիր, խաբէական:  
ՊԱՃՈՒՃԱՆ, տե՛ս ՊԱՃՈՒՃԱՆՔ:

ՊԱՃՈՒՃԱՆՔ, գ. 1. Պաճոյճ, զարդ, զար-  
դարանք, պճնութիւն, պճնանք, սեթեթ:  
2. տե՛ս ՊԱՃՈՒՃԱՊԱՏԱՆՔ:  
ՊԱՃՈՒՃԱՊԱՏԱՆՔ, գ. Պաճուճանք, խր-  
տուիլ, խուճիճ:  
ՊԱՃՈՒՃԱՍԷՐ, ա. Պճասէր, զարդասէր:  
ՊԱՃՈՒՃԵԼ, նբ. 1. Զարդարել, գեղա-  
զարդել, պճնել, գեղեղեղեղել, սեթեթել:  
2. Զմուսել: 3. Պերճաբանել:  
ՊԱՅԱԶԱՏ, գ. 1. Յաջորդ, փոխանորդ,  
ժառանգ, ժառանգորդ: 2. Ազնուատոհմ,  
ազնուական:  
ՊԱՅԱԶԱՏԵԼ, նբ. 1. Ժառանգել, յաջոր-  
դել: 2. Տիրապետել, տիրել, իշխել:  
ՊԱՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ, գ. Յաջորդութիւն  
(իշխանութեան կամ սերունդների յա-  
ջորդականութիւն):  
ՊԱՅԱԿ, տե՛ս ՊԱՅԻԿ:  
ՊԱՅԹԵԼ<sup>1</sup>, չբ. Պատուել, ճայթել:  
ՊԱՅԹԵԼ<sup>2</sup>, տե՛ս ՊԱՅԹՈՒՅԱՆԵԼ:  
ՊԱՅԹԻՒՆ, տե՛ս ՊԱՅԹՈՒՄԵՆ:  
ՊԱՅԹՈՒՄԵՆ, գ. Պայթիւն, ճայթիւն, շա-  
ռաչումն:  
ՊԱՅԹՈՒՅԱՆԵԼ, պբ. Պայթել, ճայթե-  
ցուցանել, պատուել:  
ՊԱՅԻԿ, գ. Պահակ, պահակապան (բերդի  
պահակապան գինուոր):  
ՊԱՅԾԱՌ, ա. 1. Լուսափայլ, փայլուն,  
ջինջ: 2. Շքեղ, փառացի, երեւելի,  
չքնաղ:  
ՊԱՅԾԱՌԱԲԱՆ, ա. Պերճաբան, պաճու-  
ճաբան, ճոռոմաբան:  
ՊԱՅԾԱՌԱԲԱՆԵԼ, չբ. Պերճաբանալ,  
պաճուճաբանել, ճառատել:  
ՊԱՅԾԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Պերճաբա-  
նութիւն, ճոռոմաբանութիւն:  
ՊԱՅԾԱՌԱԲԱՐ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱՊԷՄ:  
ՊԱՅԾԱՌԱԲՈՐԲՈՒՄ, ա. Յորդայոյս:  
ՊԱՅԾԱՌԱՎԵՂ, ա. Չքնաղ:  
ՊԱՅԾԱՌԱՎՈՅՆ, ա. Պայծառեղանգ:  
ՊԱՅԾԱՌԱՎՈՐԾԵԼ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱ-  
ՅՈՒՅԱՆԵԼ:

ՊԱՅԾԱՌԱԶԱՐԴ, աս. Վայելչապանձ, շքեղ:

ՊԱՅԾԱՌԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Շքեղու-թիւն:

ՊԱՅԾԱՌԱԶԳԵԱՅ, աս. մ. Պայծառա-զգեստ, լուսափայլ, պայծառ:

- ՊԱՅԾԱՌԱԶԳԵԱՅ ԼԻՆԵԼ. Պայծա-ռազգեստու, պայծառազգեստել, պայծա-ռանալ:

ՊԱՅԾԱՌԱԶԳԵՆՈՒԼ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱ-ԶԳԵԱՅ ԼԻՆԵԼ:

ՊԱՅԾԱՌԱԶԳԵՍ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱԶ-ԳԵԱՅ:

ՊԱՅԾԱՌԱԶԳԵՍՏԵԼ (իմ), տե՛ս ՊԱՅ-ԾԱՌԱԶԳԵԱՅ ԼԻՆԵԼ:

ՊԱՅԾԱՌԱԶԳԵՍՏՈՒԹԻՒՆ, ՊԱՅԾԱ-ՌԱԶԳԵՑՈՒԹԻՒՆ, գ. Լուսափայլու-թիւն, պայծառութիւն:

ՊԱՅԾԱՌԱԼՈՅՍ, տե՛ս ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌ:

ՊԱՅԾԱՌԱԿԱՆ, տե՛ս ՊԱՅԾԱՌ:

ՊԱՅԾԱՌԱԿԱՅՈՒՐԴ, գ. Տօն, տօնա-խրմբութիւն:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊԵԼ, նբ. 1. Պայծառա-ցուցանել, շքեղացուցանել: 2. չբ. Պայ-ծառանալ, շքեղանալ:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՅԼԱ-ԿԵՐՊՈՒԹԻՒՆ (4):

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՏ, աս. Գեղեցկաշէն, պայ-ծառաշէն:

ՊԱՅԾԱՌԱՀՐԱՇ, տե՛ս ՀՐԱՇԱՊԱՅԾԱՌ:

ՊԱՅԾԱՌԱՅԱՐԴԱՐ, աս. Պայծառակերտ, հոյակապ:

ՊԱՅԾԱՌԱՅԻՆ, տե՛ս ՊԱՅԾԱՌ:

ՊԱՅԾԱՌԱՆԱԼ, չբ. Լուսափայլել, շքե-ղանալ, պերճանալ, երևելի լինել:

ՊԱՅԾԱՌԱՆՇՈՅԼ, աս. Լուսաճաճանչ, լուսաւոր, անաղօտ:

ՊԱՅԾԱՌԱՇՆՆ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱԿԵՐՏ:

ՊԱՅԾԱՌԱՊԱՃՈՅԾ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱ-ԶԱՐԴ:

ՊԱՅԾԱՌԱՊԱՐԾ, աս. Գեղապանձ, պան-ծալի:

ՊԱՅԾԱՌԱՊԷՍ, մ. Փառօք, վայելչապէս:

ՊԱՅԾԱՌԱՏԵՍԻԼ, աս. Փառացի, շքեղ:

ՊԱՅԾԱՌԱՐԱՐ, աս. Լուսատու:

ՊԱՅԾԱՌԱՅՈՒՑԱՆԵԼ, պբ. Փայլեցու-ցանել, լուսաւորել, վայելչացուցանել, զարդարել:

ՊԱՅԾԱՌԵՐԱՆԳ, տե՛ս ՊԱՅԾԱՌԱ-ԳՈՅՆ:

ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ, գ. Լուսափայլու-թիւն, փայլ, լոյս, փայլումն, յստակու-թիւն, շքեղութիւն, վայելչութիւն:

ՊԱՅԾԱՌՈՒՄՆ, տե՛ս ՊԱՅԾԱՌՈՒ-ԹԻՒՆ:

ՊԱՅՂԱԿՈՒՄՆ, տե՛ս ԲԼՇԱԿՆՈՒԹԻՒՆ:

ՊԱՅՄԱՆ, գ. 1. Ուխտ, դաշն, խոստումն: 2. Կարգ, օրէնք: 3. Հանգամանք: 4. Ոճ, ձև:

ՊԱՅՄԱՆԱՒՈՐ, աս. Պայմանաւորական, օրինաւոր:

ՊԱՅՄԱՆԱՒՈՐԱԿԱՆ, տե՛ս ՊԱՅՄԱ-ՆԱՒՈՐ:

ՊԱՅՄԱՆԵԼ, նբ. Պայման առնել, դաշ-նաւորել, ուխտել:

ՊԱՅՈՒՍԱԿ, գ. Պարկ, քսակ, մախաղ:

ՊԱՅՔԱՐ, գ. Կոբւ, կազ, վէճ:

- Ի ՊԱՅՔԱՐ ՄԱՏՁԵԼ՝ ՄՏԱՆԵԼ, տե՛ս ՊԱՅՔԱՐԵԼ:

ՊԱՅՔԱՐԵԼ, չբ. Ի պայքար մատչել՝ մտանել, կազել, մաքառել, ոգորել:

ՊԱՆ, գ. 1. Բլիթ, նկան: 2. Խորիսխ:

ՊԱՆԴԱՆԴ, տե՛ս ՊԱՏԱՆԴ:

ՊԱՆԴԽՏԱԿԻՑ, աս. Նժդեհհալից:

ՊԱՆԴԽՏԱՆԱԼ, տե՛ս ՊԱՆԴԽՏԵԼ (իմ):

ՊԱՆԴԽՏԱՆՈՅ, գ. Իջևան, օտարանոց:

ՊԱՆԴԽՏԵԼ (իմ) չբ. Գաղթել, նժդեհա-նալ, նժդեհել, վտարանդել, օտարանալ:

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ, գ. Նժդեհհուլիւն, վտարանդութիւն, զաղթականութիւն, օտարութիւն:

ՊԱՆԴՈՎԱՊԱՆ, տե՛ս ՊԱՆԴՈՎԱՊԵՏ:

ՊԱՆԴՈՎԱՊԵՏ, գ. Պանդոկապան:

ՊԱՆԴՈՎԻ, գ. Իջևան, օթևան, վան, խան:

ՊԱՆ ԴՈՅՐ, ա. Անմիտ, յիմար, մորոս:  
ՊԱՆ ԴՈՐՐՈՒԹԻՒՆ, գ. Անմտութիւն, յի-  
մարութիւն:  
ՊԱՆ ԴՈՒԽՏ, ա. գ. 1. Վտարանդի, նժգեհ,  
տարագիր: 2. Գարթական, օտարական:  
ՊԱՆԹԵՆ, տե՛ս ՅՈՎԱԶ:  
ՊԱՆԻՐ, գ. Մաճառակ:  
ՊԱՆԾԱԲԱՆ, տե՛ս ՊԱՃՈՒՃԱԲԱՆ:  
ՊԱՆԾԱ ԳՈՅՆ, ա. Վսամ:  
ՊԱՆԾԱԼ, չբ. Պանծանալ, պարծել,  
Հպարտանալ, գոռոզանալ, մեծամտել:  
ՊԱՆԾԱԼԻ, ա. Հռչակելի, գովելի, Հիա-  
նալի, արգոյ, շքեղ:  
ՊԱՆԾԱՆԱԼ, տե՛ս ՊԱՆԾԱԼ:  
ՊԱՆԾԱՆՔ, գ. Պանծութիւն, պարծանք,  
շքեղութիւն:  
ՊԱՆԾԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Հռչակել, մե-  
ծացուցանել:  
ՊԱՆԾՈՒԹԻՒՆ, գ. Պանծանք, պարծանք:  
ՊԱՇԱՐ, գ. Թոշակ, պարէն, նպար:  
ՊԱՇԱՐԵԼ, նբ. Շուրջ արկանել պատել,  
չբջապատել, չբջափակել, պարփակել:  
ՊԱՇՏԱԿ, գ. Ծառայ, սպասաւոր:  
ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, տե՛ս ՊԱՇՏՈՆ:  
ՊԱՇՏԱՏԱԿԱՆ, գ. Օժիտ (որ Հարսը բե-  
րում է փեսայի տուն):  
ՊԱՇՏԵԼ<sup>1</sup>, նբ. 1. Երկիր պագանել, երկր-  
պագել, պաշտօնատար լինել, պաշտօն  
Հարկանել: 2. (եկեղց.) Պաշտօն արկանել:  
3. Սպասահարկել, ծառայել, արբանեկել:  
4. Դարմանել, հոգալ:  
ՊԱՇՏԵԼ<sup>2</sup> (իմ), չբ. Ի կիր արկանել, պէտս  
առնել, պիտօք վարել:  
ՊԱՇՏԵԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ՊԱՇՏՈՆ:  
ՊԱՇՏՈՒՄՆ, գ. Պաշտելութիւն, պաշտօն:  
ՊԱՇՏՊԱՆ, գ. 1. Պահպանող, հովանա-  
ւոր, վերակացու: 2. Օգնական, պահա-  
պան, ջատագով:  
- ՊԱՇՏՊԱՆ ԼԻՆԵԼ, տե՛ս ՊԱՇՏՊԱՆԵԼ:  
ՊԱՇՏՊԱՆԱԿՔ, գ. Պաշտպանութիւն,  
սպասահարկութիւն, արբանեկութիւն:  
ՊԱՇՏՊԱՆԵԼ, նբ. 1. Պաշտպան հովանի

լինել, հովանաւորել, ջատագովել, պահել,  
պահպանել, պատսպարել: 2. Փոյթ առ-  
նել, հոգալ, արբանեկել, պաշտել, սպա-  
սահարկել:  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Պաշտպանումն,  
հովանաւորութիւն, պահպանութիւն, օգ-  
նականութիւն, ջատագովութիւն, զօրա-  
վիգէն: 2. Սպասահարկութիւն, արբանե-  
կութիւն, պաշտօն:  
ՊԱՇՏՊԱՆՈՒՄՆ, տե՛ս ՊԱՇՏՊԱՆՈՒ-  
ԹԻՒՆ (1):  
ՊԱՇՏՈՆ, գ. 1. Պաշտումն, աստուածա-  
պաշտութիւն, պաշտամունք: 2. Իիբ,  
կուռք: 3. Սարկաւագութիւն, սպասաւո-  
րութիւն:  
- ՊԱՇՏՈՆ ԱՌՆԵԼ կամ ՄԱՏՈՒՅԱՆԵԼ.  
Մեծարել, պատուասիրել, պաշտել:  
ՊԱՇՏՈՆԱՄԱՏՈՅՑ ԼԻՆԵԼ. Պաշտօն  
մատուցել, պաշտել,  
ՊԱՇՏՈՆԱՍԷՐ, ա. Կրօնասէր, բարե-  
պաշտ:  
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ, գ. Պաշտօնեայ, պաշտօ-  
նարար, երկրպագու:  
- ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԼԻՆԵԼ. Պաշտել:  
ՊԱՇՏՈՆԱՏԱՐՈՒԹԻՒՆ, ՊԱՇՏՈՆԱՏԱ-  
ՐՈՒՄՆ, գ. Ծառայութիւն:  
ՊԱՇՏՈՆԱՐԱՆ, գ. Պաշտօնետեղ, տա-  
ճար, եկեղեցի:  
ՊԱՇՏՈՆԱՐԱՐ, տե՛ս ՊԱՇՏՈՆԱՏԱՐ:  
ՊԱՇՏՈՆԱՐՈՐ, տե՛ս ԴԻՅԱՊԱՇՏ:  
ՊԱՇՏՈՆԵԱՅ, գ. ա. 1. Պաշտօնատար,  
սպասաւոր, ծառայ: 2. Հիւպերէտ: 3. Ըն-  
դոճին: 4. Կամակատար, կամարար: 5.  
Սարկաւագ:  
ՊԱՇՏՈՆԵՏԵՂ, տե՛ս ՊԱՇՏՈՆԱՐԱՆ:  
ՊԱՇՏՈՆՈՒԿՔ, գ. Մարդահաճութիւն,  
չորոքորթութիւն:  
ՊԱՊ, գ. Հաւ:  
ՊԱՊԱՆԵԼ, նբ. Խարշատել:  
ՊԱՊԱԿԵԼ (իմ), չբ. Պասքել, տոչորել:  
ՊԱՊԱԿՈՒՄՆ, գ. Պասքումն, պասուք,  
տոչորումն:

ՊԱՊԱՆՁԵԼ<sup>1</sup>, տե՛ս ՊԱՊԱՆՁԵՑՈՒՅԱՆՆԵԼ:  
ՊԱՊԱՆՁԵԼ<sup>2</sup> (իմ), չբ. Կարկել, Համբարանալ, ափիբերան լինել:  
ՊԱՊԱՆՁԵՑՈՒՅԱՆՆԵԼ, պբ. Պապանձել, ափիբերանել, ափիբերան առնել, ըմբերանել, կարկեցուցանել, կարկել:  
ՊԱՊԱՍ, գ. Քահանայ, երէց:  
ՊԱՊԿԱՅ, գ. (կենդբ.) Դուրաք:  
ՊԱՊՁԵԱԿ, տե՛ս ԱՅԾ:  
ՊԱՌԱԿ, գ. 1. Բակ, մակաղատեղ, փաբախ: 2. լայնաբարձ ձօտ, խաչն: 3. Ազդը (խոզի):  
– ՊԱՌԱԿ ՊԱՌԱԿ. երամ երամ:  
ՊԱՌԱԿԱՆ, գ. երազագ:  
ՊԱՌԱԿՏԵԼ, նբ. Պառակտեցուցանել, պատառել, ճեղքել, խզել, Հերձուլ, բաժանել, որոշել, երկպառակտել:  
ՊԱՌԱԿՏԵՑՈՒՅԱՆՆԵԼ, տե՛ս ՊԱՌԱԿՏԵԼ:  
ՊԱՌԱԿՏՈՒԹԻՒՆ, գ. երկպառակութիւն:  
ՊԱՌԱԻ, գ. Ծերուհի:  
ՊԱՌԱԻԵԼ (իմ), չբ. 1. Ծերանալ: 2. փխբ. Հնանալ:  
ՊԱՌԱԻՈՐԴԻ, տե՛ս ԱՄԼՈՐԴԻ:  
ՊԱՌԱԻՈՒԹԻՒՆ, գ. Ծերութիւն:  
ՊԱՍԵՔ, տե՛ս ՊԱՍՔԱ:  
ՊԱՍԵՔԱՏՕՆ, ՊԱՍԵՔԱՏՕՆԱԿ, գ. Պասքա:  
ՊԱՍԿԱԿԱՆ (ՊԱՐՍԿԱԿԱՆ) ՀԱԻ, տե՛ս ՍԻՐԱՄԱՐԳ:  
ՊԱՍԿՈՒՃ, տե՛ս ԿՈՐՃ:  
ՊԱՍՈՒՔ, գ. Պասքումն, պապակումն:  
ՊԱՍԱՌ, գ. Օթոց:  
ՊԱՍԱՌԱԿԱԼ, գ. 1. Պատան: 2. Պատանք:  
ՊԱՍՔԱ, գ. (եկեղջ.) Պասք, պասքատօն, պասքատօնակ, անց, անցանակ, գատիկ:  
ՊԱՍՔԱՆԱԼ, տե՛ս ՊԱՍՔԵԼ (իմ):  
ՊԱՍՔԵԼ (իմ), չբ. 1. Պապակել: 2. փխբ. Տննչալ, կարօտել, փափաղել: 3. Յամաքել, չորանալ:

ՊԱՍՔՈՒԹԻՒՆ, ՊԱՍՔՈՒՄՆ, գ. Պասուք, պապակումն:  
ՊԱՏ ԱՌՆՈՒԼ, 1. Շրջապատել, պարփակել: 2. Գալարել (գալարներ կազմել):  
ՊԱՏ Ի ՊԱՏ, ՊԱՏ Ի ՊԱՏԷ, ՊԱՏ Ի ՊԱՏՈՒ, ա. մ. 1. Մանուածոյ: 2. փխբ. Խրթնի:  
ՊԱՏԱ ԳՐՈՍ, տե՛ս ՈՏՆԱՅԱՌՈՒԹԻՒՆ:  
ՊԱՏԱՀ, գ. Պատահար, պատահումն, դէպք, ղեպուած, անցք, հանգամանք, բախտ:  
ՊԱՏԱՀԱՐ, գ. 1. տե՛ս ՊԱՏԱՀ: 2. Արկած, հարուած, փորձանք:  
ՊԱՏԱՀԱՅՈՒՅԱՆՆԵԼ, տե՛ս ՊԱՏԱՀԵՑՈՒՅԱՆՆԵԼ:  
ՊԱՏԱՀԵԼ, չբ. 1. Հանդիպել, ի դէպ գալ, դէպ լինել, ի վերայ հասանել, ընդ առաջ ելանել, ընդդէմ լինել, բախել: 2. Լինել:  
ՊԱՏԱՀԵՑՈՒՅԱՆՆԵԼ, պբ. Հանդիպեցուցանել:  
ՊԱՏԱՀՈՒՄՆ, գ. 1. Պատահ, հանդիպումն, դէպք, ղեպուած, անցք: 2. (տրամ.) Որակ, պարագայ, հանգամանք:  
– ՊԱՏԱՀՄԱՄՔ, մ. Վրիպակութեամբ:  
ՊԱՏԱՂԵԼ (իմ), չբ. Ջբաղել, դեգերել, պարապել:  
ՊԱՏԱՂԻԶ, ա. Խափանեցուցիչ, խափանիչ, արգելիչ:  
ՊԱՏԱՂՈՒՄՆ, գ. Ջբաղումն, զբաղանք, դեգերանք:  
ՊԱՏԱՆ, գ. երիզ (փաթաթելու շոր):  
– ՊԱՏԱՆՔ. Կտաւ, պատառակալ:  
ՊԱՏԱՆԱԿԱՆ, ա. երիտասարդական:  
ՊԱՏԱՆԴ, գ. Գրաւական, պատանդութիւն:  
ՊԱՏԱՆԴԵԼ, նբ. Պաշարել, թակարդել, կաշկանդել:  
ՊԱՏԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. Պատանդ (պատանդի զբոլթիւնը):  
ՊԱՏԱՆԵԱԿ, տե՛ս ՊԱՏԱՆԻ:  
ՊԱՏԱՆԵԿԱՏՈՒՓԻՆ, տե՛ս ՄԱՆԿԱՏՈՒՓ:  
ՊԱՏԱՆԵԿԻԿ, գ. Կիսապատանեակ, մանկիկ:

ՊԱՏԱՆԻ, գ. Պատանեակ, պարմանի, տղայ, երիտասարդ:

ՊԱՏԱՌ, գ. Կոտոր, մասն, բեկոր:

ՊԱՏԱՌԱՔՈՅԾ, ա. գ. Հացկատակ:

ՊԱՏԱՌԱՏՈՒՆ, ա. Պատառուն, ցնցոտի, Հնոտի:

ՊԱՏԱՌԱՔԱՂ, գ. Մսահան:

ՊԱՏԱՌԵԼ, նբ. Բեկանեկ, հերձանեկ, հերձուլ, ցեխուլ, ճեղքեկ, յոշեկ, գերշատեկ, խզեկ:

ՊԱՏԱՌՈՒԱԾ, գ. Ծերպ:

ՊԱՏԱՌՈՒՄՆ, գ. 1. Հերձումն, խզումն, բացումն, բաժանումն: 2. փխբ. երկպառակություն, պառակտություն:

ՊԱՏԱՌՈՒՆ, տե՛ս ՊԱՏԱՌԱՏՈՒՆ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՔԱՆՈՒԹԻՒՆ, գ. Պաշտպանություն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ա. Զատագով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ, գ. 1. Համարատուություն: 2. Ապաբանություն, փաստաբանություն, ջատագովություն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՐԵԼ, նբ. Տալ պատասխանի, ջատագովել, համար տալ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ:

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ, տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ:

ՊԱՏԱՍԽԱՆԻ, գ. 1. Ասացուած (փոխադարձ): 2. Պատասխանատուություն, ջատագովություն: 3. Համարատուություն: - ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԵԼ կամ ԱՌՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ, տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ: - ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ, ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ. 1. Պատասխանել, պատասխանի առնել: 2. Պատասխանատրել, արգարացուցանել: - ՀՐԱՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ, տե՛ս ՀՐԱՄԱՆ:

ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ:

ՊԱՏԱՏԵԼ, նբ. 1. Փաթուկթել, ծածկել: 2. կ. չբ. Պատել, փարել, յարել:

ՊԱՏԱՏՈՒԿ, տե՛ս ԳԵՂԶ:

ՊԱՏԱՐԱԳ, գ. 1. Պատրուճակ, զոհ: 2.

Նուէր, ընծայ, տուրք, կաշառ:

ՊԱՏԱՐԱԳԱՔԵՐ, ա. Ընծայաբեր:

ՊԱՏԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Քահանայագործություն:

ՊԱՏԱՐԱԳԱՐԱՆ, գ. (եկեղց.) Սեղան:

ՊԱՏԱՐԵԼ, նբ. 1. Յորդել, զեղուլ: 2. Բովանդակել:

ՊԱՏԱՐՈՒՄՆ, գ. Լրումն, զեղումն, բովանդակումն:

ՊԱՏԱՐՈՒՆ, ա. Լի, զեղուն, պղպղուն, ծայրալիբ, ծայրալից, լիակատար:

ՊԱՏԳԱՄ, գ. 1. Պատուէր, հրաման, վճիռ: 2. Խրատ: 3. Լուր, համբաւ: 4. Պատգամաբեր, պատգամաւոր: - Ի ՊԱՏԳԱՄՍ ԱՆԿԱՆԵԼ, տե՛ս ՊԱՏԳԱՄԱԳՆԱՅ ԼԻՆԵԼ:

ՊԱՏԳԱՄԱՔԵՐ, ա. գ. Պատգամաւոր, դեսպան:

ՊԱՏԳԱՄԱԳՆԱՅ ԼԻՆԵԼ. Ի պատգամանկանել, հրեշտակագնաց լինել:

ՊԱՏԳԱՄԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ, գ. Հրեշտակագնացություն:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ, ա. գ. Հրեշտակ, դեսպան:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԵԼ, չբ. Հրեշտակագնաց լինել, հրեշտակագնաց առնել:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Հրեշտակություն, առաքելություն:

ՊԱՏԳԱՐԱԿ, գ. Դարգիճ, լկտիք, շալակ:

ՊԱՏԵԱՆ, գ. 1. Աման (սրի): 2. Կեղև, փոճոկ: 3. Խեցի (փափկամարմինների): 4. Խեց (կրիայի): 5. Զրահ, լանջապանակ: 6. Լանջք, կուրծք:

ՊԱՏԵԼ, նբ. 1. Պատատել, փաթուկթել: 2. Շուրջ արկանել, շրջապատել, պարփակել, պաշարել, պարուրել, դրուազել: 3. Ծածկել, վերարկել: 4. Շրջեցուցանել:

ՊԱՏԵՂ, ա. Պատշաճ, պատկանաւոր, պիտանի, դիպան, յարմար, ընդունակ, արժանի:

- ՊԱՏԵՂ Է, մբ. Ի դէպ է:

- Ի ՊԱՏԵՂ, ԸՍՏ ՊԱՏԵՂԻ, մ. Ըստ պատ-

շաճի, պատեհաբար:  
ՊԱՏԵՀԱԲԱՐ, մ. Պատեհապէս, ըստ  
պատշաճի, ի դէպ, օրինօք:  
ՊԱՏԵՀԱԳՈՅՆ, ա. մ. Յարմարագոյն,  
վայելչական:  
ՊԱՏԵՀԱՊԷՍ, տե՛ս ՊԱՏԵՀԱԲԱՐ:  
ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ, գ. 1. Պատշաճողութիւն,  
արժանաւորութիւն: 2. Դիպուած, դէպք:  
ՊԱՏԵՆԱԶԷՆ, ա. Զրահաւոր:  
ՊԱՏԵՐԱԶՄ, գ. Ռազմ. խաղմ, կռիւ,  
մարտ, ճակատ, ճակատամարտ, պայքար:  
– ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ. Պատերազմիկ:  
ՊԱՏԵՐԱԶՄԱԶԱՐԹՈՅՑ, ա. Խռովայոյգ:  
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ, ա. 1. Պատերազմիկ,  
պատերազմող: 2. գ. փիւք. Սատանայ:  
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԻՑ, ա. 1. Մարտակից, նի-  
զակակից: 2. Հակառակամարտ, ախոյե-  
ան, ոսոխ:  
ՊԱՏԵՐԱԶՄԱՍԷՆ, ա. Կռուասէր:  
ՊԱՏԵՐԱԶՄԱՏԵԱՅ, ա. Վատամիրտ:  
ՊԱՏԵՐԱԶՄԱՏՈՒ, ա. Պատերազմող, թըշ-  
նամի:  
ՊԱՏԵՐԱԶՄԵԼ (իմ), չբ. Տալ պատերազմ,  
մարտնչել, կռուել, մրցել, ճգնել:  
ՊԱՏԵՐԱԶՄԻԿ, ա. 1. տե՛ս ՊԱՏԵՐԱԶ-  
ՄԱԿԱՆ: 2. Պատերազմող, ռազմիկ:  
ՊԱՏԵՐԱԶՄԻԶ, ա. Պատերազմող, թշնա-  
մի, ոսոխ, դիմամարտ, ընդդիմամարտ:  
ՊԱՏԵՐԱԶՄՈՂ, ա. գ. 1. Ռազմիկ, մար-  
տիկ: 2. Հակառակորդ, դիմամարտ, թըշ-  
